

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ /ՀԻՄՆԱԴՐԱՄ/

ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

ՄՈՒՏՔ/ԵԼՔ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄՆԵՐԻ
ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ե.27.01 «Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա»
մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ.գ.դ., պրոֆ.,

ՀՀ գիտության վաստակավոր գործիչ

Վ. Շ. Մելիքյան

ԵՐԵՎԱՆ 2017

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
ԳԼՈՒԽ 1. ՄՈՒՏՔ/ԵԼՔ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄՆԵՐԻ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԸ.....	9
1.1. Մուտք/ելք հանգույցների բազային ենթահանգույցների աշխատանքային ռեժիմների կայունացման կարևորությունը	9
1.2. Հաղորդչի և ընդունիչ հանգույցներում ազդանշանների կարգավորման անհրաժեշտությունը.....	14
1.2.1. Մուտք/ելք հանգույցներում ազդանշանի լցման գործակցի սխալանքի առաջացման պատճառները և դրա ճշգրտման կարևորությունը	15
1.2.2. Մուտք/ելք հանգույցներում տվյալի և սինքրոազդանշանի կարգման և հաստատման ժամանակային պաշարների մեծացման կարևորությունը.....	24
1.2.3. Հաղորդչում և ընդունիչում ազդանշանի համաձայնեցման խնդիրները ...	29
1.3. Մուտք/ելք հանգույցներում տվյալի ազդանշանի և սինքրոազդանշանի փոխանակման համաձայնեցման առկա միջոցները	32
1.3.1. Մուտք/ելք հանգույցի ընդունիչում տվյալի ազդանշանից ինքնակարգաբերմամբ սինքրոազդանշանի փոփոխության վերականգնման համակարգը	33
1.3.2. Հապաղման սարքերում աշխատանքային հաճախականային շերտի մեծացման կարևորությունը	36
1.4. Մուտք/ելք հանգույցներում դիմադրությունների համաձայնեցման առկա խնդիրները	41
1.4.1. Արտաքին կայուն տարրի վրա հիմնված դիմադրության համաձայնեցման ակնարկ	45

1.5. Մուտք/ելք հանգույցներում տարբեր աշխատանքային ռեժիմներում սնման լարման անջատումից առաջացած խնդիրները	47
Եզրակացություններ	49
ԳԼՈՒԽ 2. Մուտք/ելք հանգույցների աշխատանքային ռեժիմների կայունացման առաջարկվող լուծումները	51
2.1. Հետադարձ կապով հապաղման սարքերի հաճախականային շերտի մեծացման ինքնակարգաբերմամբ մեթոդը	51
2.2. Դիմադրությունների համաձայնեցման եղանակը՝ առանց արտաքին, կայուն պարամետրերով տարրի օգտագործման,	64
2.3. Սինքրոազդանշանի լցման գործակցի ճշգրտման օպերացիոն ուժեղարարով մեթոդը	70
2.4. Տվյալի և սինքրոազդանշանի կարգման ու հաստատման ժամանկային պաշարների կայունացման մեթոդը	81
2.5. Սնման լարման անջատումից առաջացած կորուստներից և ազդանշանի աղավաղումներից ինքնակարգաբերմամբ պաշտպանման համակարգը.....	87
Եզրակացություններ	91
ԳԼՈՒԽ 3. Մուտք/ելք հանգույցների աշխատանքային ռեժիմների կայունացման ծրագրային միջոցի նկարագրությունը ԵՎ օգտագործումը	92
3.1. Մուտք/ելք հանգույցների աշխատանքային ռեժիմների կայունացման ծրագրային միջոցի կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը.....	94
3.2. Մուտք/ելք հանգույցների աշխատանքային ռեժիմների կայունացման ծրագրային միջոցով նախագծումը.....	103
3.3. IO Designer ծրագրային միջոցի արդյունավետության գնահատումը	106
Եզրակացություններ	108
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ	109

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	111
ՀԱՎԵԼՎԱԾ 1	126
ՀԱՎԵԼՎԱԾ 2.....	127
ՀԱՎԵԼՎԱԾ 3.....	138
ՀԱՎԵԼՎԱԾ 4.....	140

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հայտնի է, որ ինտեգրալ սխեմաների (ԻՍ) մասշտաբավորումը նպաստում է ԻՍ-երի արտադրության ելքի տոկոսի բարձացմանը, կիսահաղորդչային բյուրեղի (ԿԲ) վրա տարրերի խտության մեծացմանը և այլն: Սակայն առկա են նաև մի շարք այլ խնդիրներ, որոնց լուծումները կարող են հանգեցնել, ոչ միայն ԻՍ-երի նախագծման գործընթացի պարզեցմանը, այլև արտադրված ԻՍ-երի աշխատանքի հուսալիության և դրանց համապիտանիության աճին:

Տվյալների ընդունման, մշակման և փոխանցման գործընթացների ավելի ու ավելի արագագործ լինելու պահանջարկը բացասական ազդեցություն է գործել ԻՍ-երի աշխատանքային ռեժիմների կայունության վրա: Մասնավորապես, մեծացել են ազդանշանի մարման կամ աղավաղման չափերը, լարման անկումը սնման դողերում, փոխազդեցությունները, ինչպես նաև ԻՍ-երում ֆունկցիոնալ հնագույցների պարամետրերի խիստ կախվածությունները տեխնոլոգիական գործընթացից, սնման լարումից և արտաքին միջավայրի ջերմաստիճանից (ԳԼՋ): ԳԼՋ-ից ԻՍ-երի պարամետրերի կախվածության աստիճանի փոքրացումը ներկայումս դարձել է արդիական: Պատճառն այն է, որ բարդացել է ԳԼՋ-ների ցանկացած շեղման դեպքում նախագծման պահանջները բավարարելը, հետևաբար՝ թանկացել նաև է ԻՍ-երի նախագծումը:

Հաշվի առնելով նշված հիմնահարցի կարևորությունը՝ այս ոլորտի առաջատար ընկերությունները վերջին տարիներին իրականացնում են մի շարք աշխատանքներ, որոնք նպատակաուղղված են ԳԼՋ-ից ԻՍ-երի պարամետրերի կախվածության աստիճանի փոքրացմանը: Սակայն այդ լուծումները լիովին չեն բավարարում առկա պահանջներին:

Կայունություն ապահովող միջոցները հատկապես կարևոր են ԻՍ-երի մուտք/ելք հանգույցների պարագայում, քանի որ վերջիններս ապահովում են ԻՍ-երի միջուկի կապը արտաքին միջավայրի հետ և հակառակը:

Մուտք/ելք (Մ/Ե) սարքերին ներկայացվող պահանջների խստացումներին զուգընթաց առաջացել է ոչ միայն ԳԼԶ-ով պայամանավորված շեղումները չեզոքացնող լուծումների, այլև տարբեր աշխատանքային ռեժիմներում հանգույցի պարամետրական կայունության ապահովման անհրաժեշտություն:

Ատենախոսությունը նվիրված է արագագործ մուտք/ելք հանգույցների ԳԼԶ-ի և տարբեր աշխատանքային ռեժիմներում պարամետրերի կայունություն ապահովման հիմնահարցերի լուծմանը:

Հետազոտության առարկան: Մուտք/ելք հանգույցների առաջնային պարամետրերի աշխատանքային ռեժիմներից և տեխնոլոգիական գործընթացից, սնման լարումից և շրջակա միջավայրի ջերմաստիճանից կախվածությունները և դրանց լավարկման ճանապարհները:

Աշխատանքի նպատակը: Էներգասպառման և կիսահաղորդչային բյուրեղի վրա զբաղեցրած մակերեսի նվազագույն ծախսերով՝ գործընթացից, լարումից, ջերմաստիճանից և աշխատանքային ռեժիմից անկախ պարամետրական կայունացման ճարտարապետական լուծումների և մեթոդների մշակումը և հետազոտումը:

Հետազոտության մեթոդները: Ատենախոսության կատարման ընթացքում օգտագործվել են թվային, անալոգային և խառը ազդանշանային սխեմաների մշակման մոտեցումները, ԻՍ-երի մոդելավորման սկզբունքները, ծրագրային ապահովման օբյեկտակողմնորոշված եղանակը:

Գիտական նորույթը:

- Մշակվել է ինքնակարգաբերվող և համապիտանի լայն հաճախականային շերտով հապաղման հետադարձ կապով սարք, որը մի քանի հապաղման տարրերի կիրառման շնորհիվ, ապահովում է առկա լուծումների համեմատ էապես լայն հաճախականային շերտ:
- Ստեղծվել է դիմադրությունների համաձայնեցման եղանակ, որը արտաքին կայուն պարամետրերով տարրի չօգտագործման հաշվին, ապահովում է բավարար կարգաբերման սխալանք, զգալի փոքր մակերես և առկա լուծումների համեմատ զգալի պակաս էներգասպառում:

- Առաջարկվել են լցման գործակցի ճշգրտման սխեմաներ, որոնք ինքնակարգաբերման ԴՈՒ-ով և առանց դրա օգտագործման ճարտարապետությունների կիրառման հաշվին ապահովում են առկա լուծումներին էապես գերազանցող պարամետրեր:
- Մշակվել է ժամանակների պաշարների ճշգրտման համակարգ, որը ինքնակարգաբերմամբ և անկախ ԳԼՋ-ից ժամանակային պաշարների ճշգրտման հաշվին բացառում է փոքր կարգման կամ հաստատման տևողություններից առաջացած թրթռոցը, փոքրացնում է փոխանցված տվյալի սխալանքը և զգալիորեն կրճատում նախագծման ժամկետը:
- Ստեղծվել է բազմասնուցումային համակարգերում լրացուցիչ էներգասպառման կորուստները բացառող մեթոդ, որը ԿԲ-ի վրա մակերեսի մեծացման հաշվին ապահովում է սնման լարումների անջատումներից առաջացած կորստի հոսանքների զգալի նվազեցում:

Պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

- Առանց արտաքին, կայուն պարամետրերով տարրի օգտագործման՝ դիմադրությունների համաձայնեցման եղանակը:
- Լայն հաճախականային տիրույթով հապաղման հետադարձ կապով համակարգը:
- Սնման լարման անջատումից առաջացած կորուստներից և ազդանշանի աղավաղումներից ինքնակարգաբերմամբ պաշտպանության մեթոդը:
- Սինքրոազդանշանի լցման գործակիցը երկու տիպի ճշգրտող համակարգեր:
- Արագագործ մուտք/ելք հանգույցներում տվյալի և սինքրոազդանշանի կարգման և հաստատման ժամանակային պաշարների ինքնակարգաբերմամբ սահմանվող համակարգը:

Աշխատանքի գործնական արժեքը:

Գրականությունից հայտնի իրագործումների համեմատ՝ ատենախոսության մեջ քննարկվող լուծումներով հաջողվել է.

- մեծացնել հետադարձ կապով հապաղման սարքի աշխատանքային հաճախականային շերտը մինչև ~70%-ով,

- ապահովել անկախ ԳԼՋ-ից սինքրոազդանշանի և տվյալների ազդանշանի միջև բավարար կարգման և հաստատման պաշարներ (~88 պլ նվազագույն դեպքում),
- դիֆերենցյալ ուժեղարարով (ԴՈւ) տարբերակով առավելագույնը ~2,3 մԱ և ~80%-ով ավելի քիչ առանց ԴՈւ-ի հոսանքի ծախսի հաշվին լցման գործակցի մինչև $50 \pm 1\%$ ճշգրտում,
- ԿԲ-ի վրա ստանալ կայուն տարր, որի դիմադրության կարգաբերման սխալանքի առավելագույնը ~5,1% արժեքը հաշվին, ապահովում է 12 - 70% - ով պակաս էներգիաասպառում և էապես փոքր մակերես:
- սնման անջատումների ռեժիմներում ապահովել կորստի հոսանքի ~98 %-ով նվազեցում:
- մշակված IO Designer ծրագրային միջոցի կիրառումը կարող է զգալիորեն պարզեցնել նման համակարգերի մշակման և նախագծման գործընթացը:

Գիտական դրույթների հավաստիությունը: Գիտական արդյունքները հաստատված են ատենախոսությունում ներկայացված մաթեմատիկական հիմնավորումներով և մոդելավորման փորձնական արդյունքներով:

Ներդրումը: IO Designer նախագծման ծրագրային գործիքը լայնորեն գործածվում է «Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ում: Այն նախատեսված է մուտք/ելք սարքերի աշխատանքային ռեժիմների կայունացման հանգույցների նախագծման, ճշգրտման և մոդելավորման արդյունքների վերլուծության համար:

Հրապարակումներ: Ատենախոսությունում ներկայացված դրույթները ամփոփված են 14 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածությունից, 3 գլխից, եզրահանգումից, 138 անուն գրականության ցանկից և 4 հավելվածներից, որոնցից առաջինում ներկայացված է ատենախոսության ներդրման ակտը, երկրորդում՝ դիմադրության համաձայնեցման համակարգի Spice նկարագրության հատված, երրորդում՝ IO Designer ծրագրային միջոցի նկարագրության հատվածներ, իսկ չորրորդում՝ օգտագործված աղյուսակների, նկարների և հապավումների ցանկերը: Ատենախոսության ծավալը կազմում է 119 էջ, իսկ հավելվածների հետ միասին՝ 139 էջ:

ԳԼՈՒԽ 1. ՄՈՒՏՔ/ԵԼՔ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ


ՌԵԺԻՄՆԵՐԻ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԸ

1.1. Մուտք/Ելք հանգույցների բազային ենթահանգույցների աշխատանքային ռեժիմների կայունացման կարևորությունը

Ինտեգրալ սխեմաներին (ԻՍ) առաջադրվող արդի պահանջներից է համապիտանիությունը, որի անհրաժեշտությունը հիմնականում առաջացել է պայմանավորված տարբեր աշխատանքային հաճախություններով աշխատող համակարգերով: Մասնավորապես բազմաթիվ հատուկ Մուտք/Ելք (Մ/Ե) սարքերի [1-3] (աղ. 1.1) առկայությունը (համապիտանի հաջորդական դող (ՀՀԴ) [4,5], համակարգչային բաղադրիչ փոխկապակցման հանգույց (ՀԲՓՀ) [6], հաջորդական առաջադեմ տեխնոլոգիաների հավելված (ՀԱՏՀ), բարձր որակով մուլտիմեդիայի համար ինտերֆեյս (ԲՈՄՀԻ), մուլտիմեդիայի հանգույց (ՄՀ), ինտերֆեյսային միավոր հավելված (ԻՄՀ) և այլն) այդ սարքերում համապիտանի ենթահանգույցների օգտագործման անհրաժեշտություն է առաջացնում: Այս ճանապարհով նվազեցվում են նաև ԻՍ-ների նախագծման ժամանակը և մարդկային ռեսուրսների ծախսը: Բացի տարբեր, ստանդարտ աշխատանքային հաճախություններով Մ/Ե սարքերից [7], մեկ Մ/Ե սարքը կարող է աշխատել նաև մի քանի ռեժիմներում, որոնք նույնպես ենթադրում են տարբեր աշխատանքային հաճախությունների առկայություն:

Դասական Մ/Ե հանգույցը [1,2] ներկայացնում է տվյալների հաղորդման և ընդունման միջոց: Այն բաղկացած է ընդունիչ, հաղորդիչ և հենակային հանգույցներից: Վերջիններս մատակարարում են առաջին երկու հանգույցներին տարբեր հենակային ազդանշաններով (նկ. 1.1): Հենակային հանգույցներից է փուլային ինքնաենթահամալարման համակարգը (ՓԻՀ) [8], որը, ստանալով արդեն ուժեղացված հենակային սինքրոազդանշանը, սինթեզում է արագագործ սինքրոազդանշան՝ հաղորդիչ կամ ընդունիչ հանգույցների համար, իսկ լցման գործակցի ճշգրտման համակարգը (ԼԳԾՀ) [9] [10] ուղղում է այդ ազդանշանների լցման գործակիցը (ԼԳ):

Հենակային հաջորդ ենթահանգույցը ջերմաստիճանից անկախ լարման կայունարարն է (ՋԱԼԿ) [11-15], որն ապահովում է ջերմաստիճանից անկախ, սնման և հենակային լարում Մ/Ե հանգույցի համար: Այս հանգույցի աշխատանքը հիմնված է երկբևեռ տրազիստորների հատկությունների վրա: Հայտնի է, որ բազա-էմիտեր անցման լարման անկումն ունի ջերմաստիճանային հակադարձ կախվածություն: Այսինքն, նույն հոսանքի դեպքում, ջերմաստիճանի մեծացմանը զուգընթաց, $V_{բէ}$ (բազա-էմիտեր) լարումը փոքրանում է:



Նկ. 1.1. Մ/Ե հանգույցի ճարտարապետությունը

Վերադրելով այդ բնութագիրը որևէ դրական կախվածությանը՝ ստացվում է ջերմաստիճանից գրեթե անկախ կայուն լարման բնութագիր:

Ազդանշանը հոսքուղով անցնելիս անդրադառնում է և աղավաղում է իր օգտակար բաղադրիչը, ինչը տվյալի ոչ հուսալի ընթերցման պատճառ է դառնում: Այս երևույթի հիմնական պատճառը չհամաձայնեցված դիմադրություններն են: Դիմադրությունների համաձայնեցման համակարգը (ԴՀՀ) [16-20] համաձայնեցնում է հաղորդչի ելքային և ընդունիչի մուտքային դիմադրությունները հոսքուղու դիմադրությանը, որը սահմանվում է տվյալ Մ/Ե սարքի ստանդարտով:

Քանի որ հաղորդիչ հանգույցին սինքրոազդանշանը չի փոխանցվում, հետևաբար՝ անհրաժեշտություն է առաջանում ստանալ այնպիսի փուլով սինքրոազդանշան, որով հնարավոր կլինի հուսալիորեն կարդալ մուտքային տվյալների ազդանշանը:

Սինքրոազդանշանի փուլի վերականգնման հանգույցը (ՍՓՎՀ) [21-30], հիմնվելով տվյալների ազդանշանի փուլի վրա, շեղում է ՓԻՀ-ից եկած սինքրոազդանշանի փուլը, և որպես արդյունք ստացվում է տվյալների ազդանշանի ընթերցման համար անհրաժեշտ փուլ: Վերոհիշյալ գրեթե բոլոր հանգույցները անհրաժեշտ ենթահանգույցներ են կազմում ներկայացված (աղ. 1.1) Մ/Ե ստանդարտների համար: Այսինքն, այդ ենթահանգույցները համատեղելի պետք է լինեն բոլոր ստանդարտ աշխատանքային հաճախություններում և ունենան կայուն աշխատանքային վարք: Սա կնպաստի Մ/Ե հանգույցների աշխատանքային ռեժիմների կայունացման և համապիտանիության աճին, հետևաբար՝ կնվազեցնի նաև նախագծման ժամանակը, ինչն էլ Մ/Ե հանգույցների նախագծման հիմնախնդիրներից է:

Մ/Ե հանգույցներով տվյալների փոխանցումը կարող է կատարվել երկու եղանակով՝ զուգահեռ կամ հաջորդական [1,2]: Տվյալների զուգահեռ փոխանցման դեպքում մեկից ավելի հաղորդիչներ և ընդունիչներ միաժամանակ ուղարկում և ընդունում են տվյալները (նկ. 1.2): Այդ դեպքում նույն տվյալի փոխանցման արագությունը ստանալու համար մեկ հոսքուղով անցնող ազդանշանի արագությունը, հետևաբար՝ նաև սինքրոազդանշանի հաճախությունը ավելի փոքր է՝ համեմատած հաջորդականի հետ:

Տվյալի փոխանցման մեծ հեռավորությունների դեպքում հաջորդական փոխանցումն ավելի գերադասելի է, քանի որ մեկ ազդանշանի համաձայնեցումը ավելի հեշտ է և, բնականաբար, հոսքուղու գինը՝ ավելի փոքր: Հետևաբար՝ կարիք է առաջանում հաջորդական Մ/Ե հանգույցի կառուցվածքի մեջ օգտագործել ազդանշանի՝ զուգահեռից հաջորդական (ՀՀԿ) [31-35] և հաջորդականից զուգահեռ (ՀՀԿ) [36-40] կերպափոխիչները (նկ. 1.2): Պրոցեսորից կամ հիշողությունից տվյալները դեպի Մ/Ե հանգույց ուղարկվում են զուգահեռ դողերով: Զուգահեռ

տվյալների փոխանցման դեպքում հաղորդիչ-հոսքուղի-ընդունիչ (ՀՀԸ) համակարգերը մեկից ավելի են: Զուգահեռ մուտքային տվյալներից յուրաքանչյուրին համապատասխանում է մեկ ՀՀԸ համակարգ (նկ. 1.3): Քանի որ տվյալների զուգահեռ փոխանցման դեպքում մեկ ՀՀԸ համակարգում փոխանցման արագությունը ավելի փոքր է, հետևաբար՝ հեշտանում է նաև ՀՀԸ համակարգի ազդանշանի համաձայնեցման հարցը: Որոշ դեպքերում համաձայնեցման կարիք ընդհանրապես չկա:


Աղյուսակ 1.1

Մ/Ե հանգույցների հիմնական ստանդարտները


Մ/Ե ստանդարտը	Տակտային ազդանշանի պարբերությունը (պվ)	Տակտային ազդանշանի հաճախությունը (Գհց)	Տվյալի փոխանցման արագությունը (Գբիթ/վ)
Fiber Channel	125	8	16
PCIe IV	125	8	16
CEI-11G	180	~5,55	~11,11
10GBase-KR	193	~5,18	~10,36
USB 3.1	200	5	10
PCIe III	250	4	8
CEI-6G	313	~3,19	~6,4
XAUI 6.25G	320	3,125	6,25
SATA III	333	3	6
PCIe II	400	2,5	5
USB 3.0	400	2,5	5
10GBase-KX4	640	~1,56	3,125
XAUI 3.125G	640	~1,56	3,125
SATA II	666	1,5	3
PCIe I	800	1,25	2,5
SATA I	1333	~0,75	1,5
HSIC	~4166	0,24	0,480 (480 Մբիթ/վ)

USB 2.0	~4166	0,24	0,480 (480 Մբ/վ)
USB 1.1	~166666	0,006	0,012 (12 Մբ/վ)
USB 1.0	~1333333	0,00075	0,0015 (1,5 Մբ/վ)

Տվյալների զուգահեռ կամ հաջորդական փոխանցման դեպքերում ենթահանգույցների նախագծման պահանջները նույնպես տարբեր են: Այստեղ նույնպես առաջանում է այդ ենթահանգույցների աշխատանքային տիրույթների ընդլայնմամբ կամ այլ կերպ համապիտանիության բարձրացման անհրաժեշտություն:



Նկ. 1.2. Հաջորդական Մ/Ե հանգույցի ճարտարապետությունը



Նկ. 1.3. Զուգահեռ Մ/Ե հանգույցի ճարտարապետությունը

Ամփոփելով կարելի է առանձնացնել այն գործոնները, որոնք Մ/Ե սարքերի ենթահանգույցների աշխատանքային ռեժիմների կայունացման և նրանց համապիտանիության բարձրացման անհրաժեշտություն են առաջացնում.

- Առկա Մ/Ե սարքերի բազմաթիվ ստադարտները և այդ ստանդարտների տարբեր պահանջները:
- Մ/Ե սարքերի նախագծման ժամկետը և բարդությունները:
- Տարբեր ճարտարապետությամբ և աշխատանքային ռեժիմներով աշխատող Մ/Ե սարքերի համար տարբեր պահանջների առկայությունը:

1.2. Հաղորդչի և ընդունիչ հանգույցներում ազդանշանների կարգավորման անհրաժեշտությունը

Ընդունման, մշակման և հաղորդման փուլերում ազդանշանների անհրաժեշտ որակի ապահովման համար պետք է հաշվի առնել մի քանի պարամետրեր: Այդ պարամետրերի ուղղման անհրաժեշտությունն առաջանում է ազդանշանի՝ առանց տեղեկության կորստի ընդունման և հաղորդման պատճառով: Մ/Ե սարքը հանդիսանում է ազդանշանի տարածման միակ միջոցն է կիսահաղորդչային բյուրեղից (ԿԲ) դեպի արտաքին միջավայր: Այս փուլում տվյալների կորստի գործոնը բավականին ռիսկային է: ՀՀԸ համակարգի սխալ համաձայնեցումը, հաղորդվող ազդանշանի որակը և ընթերցող հատվածի սխալանքը կարող է հանգեցնել տվյալների կորստի և նույնիսկ ամբողջ համակարգի տվյալների փոխանցման գործընթացի խափանման: Ուստի ՀՀԸ համակարգերում անհրաժեշտություն է առաջանում կարգավորել ազդանշանի տեսքը և կատարել ճշտգրիտ համաձայնեցում:

Ժամանակակից արագագործ Մ/Ե սարքերում ազդանշանն ունի ուղղանկյուն տեսք: Այս տիպի ազդանշանն ունի մի քանի կարևոր պարամետրեր, որոնց կարգավորման հարցը մեծ հաճախականություններում դարձել է կրիտիկական: Որքան փոքր է ազդանշանի պարբերությունը (T), այնքան համեմատական է դառնում դրանց սխալանքի մասը օգտակար ազդանշանի մեջ:

Ազդանշանի սխալանքները կարող են առաջացնել տվյալների կորուստ դեռևս ազդանշանի մշակման փուլում: Արագագործ սարքերում հաճախ օգտագործվում են դիֆերենցիալ ազդանշաններ աղմկակայունության բարձրացման նպատակով, սակայն դա առաջացնում է լրացուցիչ խնդիրներ: Մասնավորապես, այն բոլոր շեղումները, որոնք առաջանում են դիֆերենցիալ երկու ազդանշանների միջև (նկ. 1.4), կարող են սխալ առաջացնել ԻՍ-ում ազդանշանի տարածման ժամանակ: Օգտակար ազդանշանի պաշարը իդեալական դեպքում ազդանշանի պարբերությանը հավասար մեծություն է: Սակայն, այն բոլոր սխալները, որոնք առաջանում են դիֆերենցիալ ազդանշանների միջև, ինչպիսիք են՝ շեղումը երկու դիֆերենցիալ ազդանշանների միջև, լցման գործակցի սխալանքը, թրթռոցը (նկ. 1.4), փոքրացնում են այդ պաշարը: Արդյունքում՝ փոքրանում է արդյունավետ ազդանշանի փոխանցման, մշակման և ընթերցման հուսալիությունը: Նման շեղումները և սխալանքները փոքրացնում են նաև տրիգերների մուտքային ազդանշանի կարգման և հաստատման ժամանակների պաշարները: Արդյունքում՝ մեծանում է նաև տվյալի սխալի առաջացման հավանականությունը:

Սնման լարման աղմուկները, տարրերի սեփական աղմուկները, տեխնոլոգիական շեղումները, մակաբույծ տարրերը և ջերմաստիճանը այն հիմնական գործոններն են, որոնք առաջացնում են օգտակար ազդանշանի սխալանքներ և փոքրացնում են օգտակար ազդանշանի պաշարը:

Այդ պաշարների ուղղման վրա ծախսվող նախագծման ժամանակը փոքրացնելու և համակարգն ավելի համապիտանի դարձնելու նպատակով արդիական է դարձել ինքնակարգաբերումով համակարգերի ներմուծումը, որը կդարձնի այն ԳԼՋ-ից անկախ և կնպաստի Մ/Ե սարքերում տարբեր աշխատանքային ռեժիմների կայունացմանը:


1.2.1. Մուտք/ելք հանգույցներում ազդանշանի լցման գործակցի սխալանքի առաջացման պատճառները և դրա ճշգրտման կարևորությունը

Մ/Ե հանգույցներում օգտակար ազդանշանի պաշարի փոքրացման մեծ գործոններից մեկը լցման գործակցի սխալանքն է [41]: Առանց այդ սխալանքի

ճշտգրտման՝ ազդանշանի արդյունավետ ընթերցման հավանականությունը փոքրանում է:


Արդյունքում, ազդանշանը տարածվելով համակարգի միջով, ակումուլատիվ կերպով կարող է վատացնել լցման գործակիցը, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել ազդանշանի կորուստի (նկ. 1.5): Ազդանշանի այդպիսի վարքը պայմանավորված է ոչ միայն տեխնոլոգիական գործընթացի շեղումներից, այլ նաև սնման դողերում լարման, լիցքակիրների քառասային շարժմամբ և տրանզիստորների սեփական աղմուկներով:

Նման համակարգերի նախագծման փուլում կատարվում է առանձին բջիջների ելքային ժամանակային պարամետրերի լավարկում՝ տրանզիստորների չափերի փոփոխման ճանապարհով: Բացի նրանից, որ նախագծման մեծ ժամանակ և միջոց է ծախսվում նման տարբերակով ազդանշանի որակի բարձրացման վրա, նաև չի լուծվում ԼԳ-ի խիստ կավածության հարցը ԳԼՋ-ից: Ուստի անհրաժեշտություն է առաջանում նախագծել մի այնպիսի համակարգ, որը թույլ կտա, անկախ աշխատանքային հաճախությունից և ԳԼՋ-ից, ուղղել ազդանշանի ԼԳ-ն և կայունացնել ազդանշանի տարածումը համակարգով:



Նկ. 1.4. Ուղղանկյունաձև դիֆերենցիալ ազդանշանների ժամանակային պարամետրերը

Մ/Ե սարքերը հիմանականում իրենցից ներկայացնում են խառը-ազդանշանային համակարգեր, որոնցում թվային հատվածի ազդանշանի որակից կախված՝ կարող են փոխվել անալոգային սխեմաների բնութագրերը: Ստորև դիտարկված է մի քանի օրինակ լցման գործակցի սխալանքի ճշտագրման կարևորություն մասին:




Նկ. 1.5. Համակարգում լցման գործակցի կուտակային վարքը

1. Լարման շեղման կանխումը

Այդպիսի վառ օրինակ է գրականությունից հայտնի օպերացիոն ուժեղարարներում ելքային լարման շեղումը կանխող համակարգը: Այն ավելի հայտնի է «չոպերի մեթոդ» անվանմամբ [42-45]:

Օրինակ, դիֆերենցիալ ուժեղարարներում (ԴՈւ), ինչպես հայտնի է, առկա է մուտքային լարման շեղում (նկ. 1.6): Այն առաջանում է մուտքային տրազիստորների ոչ միանմանությունից, որը ԳԼԶ-ի շեղումների հետևանք է:



Նկ. 1.6. Դիֆերենցիալ ուժեղարարներում լարման շեղումը

(1.3)-ից երևում է, որ այդ շեղումը ուժեղանալով հանգեցնում է ելքային լարման զգալի շեղման:

$$A_v = \Delta V_k / \Delta V_u \quad (1.1)$$

$$\Delta V_u = V_{u1} - V_{u2} + V_2 \quad (1.2)$$

$$V_{k1} - V_{k2} = A_v (V_{u1} + V_2 - V_{u2}) \quad (1.3)$$


որտեղ A_v – ն դիֆերենցիալ ուժեղարարի ուժեղացման գործակիցն է V_2 – ը՝ մուտքային լարման շեղումը:

Այսպիսի շեղումները կարող են հանգեցնել համակարգի ամբողջական խափանմանը: Հետևաբար՝ պետք է գտնել մի այնպիսի լուծում, որը կկանխի շեղման լարման առաջացումը: Գրականությունից հայտնի է շեղման լարման կանխման «չոպերի մեթոդը» [42-45]: Համաձայն այդ մեթոդի, ինչ-որ հաճախությամբ փոխելով շեղման լարումը բևեռականությունը և այնուհետև միջինացնելով այն, կարելի է շեղման


լարումը հավասարեցնել 0-ի: Համապատասխան V_{in} և $\overline{V_{in}}$ տակտային ազդանշաններով ղեկավարվող փականները (նկ. 1.7), փոփոխելով մուտքային և ելքային ազդանշանների միացումները, առաջացնում են երկբևեռանի ազդանշան, որը շեղվում է $\pm V_2$ չափով մուտքերում: Արդյունքում՝ այդ շեղումը հանգեցնում է նույն հաճախությամբ ելքային ազդանշանի շեղման:

Ինտեգրելով V_{t1} ելքային ազդանշանը ցածր հաճախականային ֆիլտրով (ՑՀՖ) ստացվում է մուտքային շեղումից անկախ V_{t1p} ազդանշան (նկ. 1.8, ա): Այս մեթոդի գործադրման դեպքում շատ կարևոր է ունենալ որակյալ տակտային ազդանշան, որի լցման գործակիցը հնարավորինս մոտ կլինի 50%-ին: Հակառակ դեպքում՝ ազդանշանի ինտեգրումից հետո կմնա որոշակի շեղում (նկ. 1.8, բ), որը համաչափելի կլինի տակտային ազդանշանի լցման գործակցի սխալանքին, քանի որ ազդանշանի ինտեգրումից ստացված լարման հարաբերությունը սնման լարմանը ուղիղ համեմատական է լցման գործակցին:


Քանի որ լարման շեղումը կախված է ԳԼՋ-ի փոփոխություններից, հետևաբար՝ այնպիսի համակարգերը ինչպիսիք են՝ լարման կայունարարները, ՋԱԼԿ-ները և բոլոր այլ սարքերը՝ օպերացիոն ուժեղարարի հիման վրա, կունենան շեղված բնութագրեր, ինչը կհանգեցնի խափանումների: Հետևաբար՝ կարիք է առաջանում ունենալ ԳԼՋ-ից և աշխատանքային ռեժիմից անկախ, հնարավորինս 50%-ին մոտ լցման գործակցով տակտային ազդանշան, որը կօգտագործվի շեղման լարման կանխման համակարգում և ազդանշանի ինտեգրումից հետո կապահովվի շեղման լարումից անկախ ելքային ազդանշան:



Նկ. 1.7. Չոպերի մեթոդով լարման շեղման կանխումը



ա)




2. Հաղորդչի աչքի դիագրամը

Հաղորդչի ելքային ազդանշանը, մինչև հոսքուղով հաղորդելը, համընկեցվում է որոշակի տակտային ազդանշանի փուլին: Այդ տակտային ազդանշանի թրթռոցը, լցման գործակցի սխալանքը և, եթե տվյալը հաղորդվում է դիֆերենցիալ հոսքուղով, ուրեմն նաև դիֆերենցիալ ազդանշանների միջև շեղումը հաղորդվում են տվյալի ազդանշանին: Այս ամենը հանգեցնում է հաղորդչի ելքային ազդանշանի աչքի դիագրամի (նկ. 1.9) [46-50] վատթարացմանը:

Աչքի դիագրամից կարելի է չափել ազդանշանի թրթռոցը, որի բաժին է կազմում տակտային ազդանշանի լցման գործակցի սխալանքը: Նկ. 1.9-ում պատկերված է աչքի դիագրամի ստացման ուղին: Տվյալի ազդանշանը, սինքրոնանալով տակտային ազդանշանով, հաղորդվում է հոսքուղի: Բաժանելով տվյալի ազդանշանը տակտային ազդանշանի պարբերությանը հավասար մասերի և վերադրելով դրանք՝ կստանանք հաղորդչի ելքային ազդանշանի աչքի դիագրամը:

Աչքի դիագրամից կարելի է չափել ազդանշանի հետևյալ պարամետրերը՝


1. ազդանշանի հորիզոնական և ուղղահայաց բացվածքները,
2. աճման և նվազման ճակատների տևողությունները,
3. բիթի տևողությունը,
4. տրամաբանական 0-ի և 1-ի մակարդակների շեղումը,
5. թրթռոցը:




Նկ. 1.9. Ազդանշանի աչքի դիագրամի ստացման ուղին

Հաղորդչի ելքային կասկադը հիմնականում բաղկացած է [2,3] սինքրոնացնող սարքից (տրիգեր) և ելքային բուֆերից: Տրիգերի տակտային ազդանշանի անճշտությունները անցնում են ելք, և արդյունքում՝ փոխվում են ելքային ազդանշանի ժամանակային պարամետրերը (նկ. 1.10):

Լցման գործակցի սխալանքի ազդեցությունը մեծ հաճախություններում առավել կրիտիկական է, քանի որ այդ սխալանքը համեմատական է դառնում ազդանշանի պարբերությանը: ԼԳ-ի սխալանքի հաշվին փոքրանում է օգտակար ազդանշանի պաշարը: Արդյունքում՝ փակվում է տվյալի ազդանշանի աչքը ո՛չ միայն հաղորդչի անմիջապես ելքում, այլև ընդունիչի մուտքում (նկ. 1.11): Այս ամենը հանգեցնում է ընդունիչի կողմից ազդանշանի հուսալի ընթերցման հավանականության փոքրացմանը:



Նկ. 1.10. Ազդանշանի աչքի դիագրամի վրա չափվող պարամետրերը



Նկ. 1.11. Մ/Ե սարքի հաղորդչի ելքային կասկադը


Այս օրինակները վկայում են այն մասին, որ ներկայումս Մ/Ե սարքերում արագագործության մեծացմանը զուգընթաց մեծացել է ազդանշանի լցման գործակցի սխալանքի ճշգրտման կարևորությունը:

1.2.2. Մուտք/Ելք հանգույցներում տվյալի և սինքրոազդանշանի կարգման և հաստատման ժամանակային պաշարների մեծացման կարևորությունը

Մ/Ե հանգույցներում անհրաժեշտ պայման է տվյալի և տակտային ազդանշանի միջև համապատասխան ժամանակային պաշարների առկայությունը: Այդ պաշարների կարգավորումն արվում է համակարգի նախագծման փուլում: Այս պարամետրերը նույնպես կախված են ԳԼՋ-ի փոփոխություններից: Կարգման և հաստատման ժամանակների [51-53] ոչ բավարար պաշարների դեպքերում կարող են ի հայտ գալ հետևյալ անցանկալի երևույթները.

1. Ելքային ազդանշանի թրթռոցի մեծացումը

Կարգման և հաստատման թույլատրելի ժամանակներից փոքր ժամանակների դեպքում փոխվում է տրիգերի տակտային ազդանշանից դեպի ելք տարածման հապաղումը: Հայտնի է 2 տիպի՝ ճակատով և մակարդակով աշխատող տրիգերներ (նկ. 1.12):



Նկ. 1.12. Ճակատով և մակարդակով աշխատող տրիգերների դեպքում կարգման և հաստատման ժամանակները


Երկու դեպքում էլ թույլատրելից փոքր պաշարների հետևանքով ելքային ազդանշանն ունենում է մեծ հապաղումներ: Արդյունքում՝ մուտքային ազդանշանի նույնիսկ չնչին փոփոխությունների դեպքում ելքային ազդանշանի հապաղման փոփոխությունը զգալի է: Այս երևույթը հանգեցնում է ելքային ազդանշանի թրթռոցի մեծացմանը և պայմանավորված է տրիգերի ճարտարապետությամբ:

Տվյալի և տակտային ազդանշանի միջև թույլատրելից մեծ կարգման և հաստատման ժամանակային պաշարների դեպքում $t_{տ-է}$ տակտային ազդանշանից դեպի ելք տարածման հապաղումը գրեթե հաստատուն է (նկ. 1.13): Թույլատրելից փոքր կարգման ժամանակի պաշարի դեպքում $t_{տ-է}$ – ը կտրուկ աճում է: Այնուհետև, $t_{է}$ կարգման ժամանակի կրիտիկական արժեքների դեպքում տրիգերի ելքում տեղի է ունենում տվյալի սխալ: Նույնը տեղի է ունենում $t_{է}$ հաստատման ժամանակի դեպքում: Եթե կարգման կամ հաստատման ժամանակների պաշարները գտնվում են փոփոխվող $t_{տ-է}$ տեղամասում, ապա տակտային ազդանշանի փոքր փոփոխությունը հանգեցնում է տրիգերի ելքային ազդանշանի զգալի թրթռոցի (նկ. 1.14): Արդյունքում՝ առաջանում է ժամանակային պատուհան, որը նույնպես փոքրացնում է օգտակար ազդանշանի պաշարը: Մ/Ե սարքերում ազդանշանը տարածվում է տակտային ազդանշանով սինքրոնացվող տրիգերներով և եթե այդ տրիգերների մուտքային ազդանշանների միջև չլինեն բավարար կարգման և հաստատման ժամանակային պաշարներ, ապա դա կհանգեցնի ելքային ազդանշանների թրթռոցի մեծացման (նկ. 1.14):

Քանի որ տարբեր Մ/Ե սարքերի ստանդարտներն ունեն տարբեր աշխատանքային ռեժիմներ և հաճախություններ, ապա յուրաքանչյուր հաճախության համար կարգման և հաստատման ժամանակների պաշարների ուղղման վրա ծախսվող նախագծման ժամանակը և ռեսուրսները բավականին մեծ են:


Ուստի կարիք է առաջանում ունենալ մի այնպիսի համակարգ, որը ինքնակարգաբերմամբ, անկախ ԳԼՋ-ից և աշխատանքային հաճախականությունից, կկարգաբերի կարգման և հաստատման ժամանակային պաշարները:

Արդյունքում՝ կնվազի Մ/Ե համակարգում տվյալի սխալանքի առաջացման հավանականությունը, և կփոքրանա ժամանակային թրթռոցի բաժինը օգտակար ազդանշանի պաշարում:



Նկ. 1.13. Տակերային և փայլի ազդանշանների (t_{un-m}) և փակերային ազդանշանից

դեպի ելք փարածման (t_{un-l}) հապաղումների կախվածությունը



*Նկ. 1.14. Ելքային ազդանշանի թրթռոցի վրա փոքր կարգման ժամանակի
ազդեցությունը*

2.Ելքային ազդանշանի տվյալի սխալը

Փոքր կարգման և հաստատման ժամանակային պաշարների դեպքում հնարավոր է նաև ելքային տվյալի տրամաբանական սխալանք [54,55]: Մ/Ե սարքերում միավոր ժամանակում՝ հաղորդչի կողմից տվյալի փոխանցման ընթացքում տվյալի տրամաբանական սխալանքների քանակն անվանում են բիթի սխալանքների քանակ (ԲՍՔ): Սակայն առավել հարմար տարբերակ է հաշվել տվյալի տրամաբանական սխալանքների քանակի և տվյալի ամբողջ փաթեթի բիթերի քանակի վրա հարաբերությունը արտահայտված տոկոսներով: Այս պարամետրը կոչվում է փոխանցված տվյալի սխալանք (ՓՏՍ) [56-59]:

$$\Phi SU = \frac{N_u}{N_{\phi}} * 100\% \quad (1.4)$$

որտեղ N_u -ն տվյալի տրամաբանական սխալանքների քանակն է, իսկ N_{ϕ} -ն՝ տվյալի ամբողջ փաթեթի բիթերի քանակը:

Այսինքն, եթե հաղորդչով փոխանցվում է տվյալների հետևյալ հաջորդականությունը՝

01100 01011,

և հաղորդիչը ընդունում է այն որպես՝

00100 01001,

ապա ՓՏՍ-ն այս դեպքում հավասար է 20%-ի, քանի որ փոխանցված 10 բիթերից 2-ը սխալ տրամաբանական արժեք ունեն:

Մ/Ե սարքերում ՓՏՍ-ն մեծացնող հիմնական գործոններն են դրանք աղմուկները, ազդանշանների վերադրությունները և փոքր կարգման և հաստատման ժամանակային պաշարները:


Հիմնականում համակարգի ՓՏՍ-ն գնահատվում է՝ կախված ազդանշան-աղմուկ հարաբերության գործակցից (ԱԱՀԳ) [60-62]: ԱԱՀԳ-ն ցույց է տալիս, թե աղմուկը օգտակար ազդանշանի ամպլիտուդի որ մասն է կազմում (1.5):

$$\text{ԱԱՀԳ} = \frac{A_{\text{օսւ}}}{A_{\text{աղ}}} \quad (1.5)$$


որտեղ $A_{\text{օսւ}}$ – ն օգտակար ազդանշանի, իսկ $A_{\text{աղ}}$ – ը աղմուկի ուժեղացման գործակիցներն են:

ԱԱՀԳ-ն որոշվում է ազդանշանի սպեկտրալ վերլուծության արդյունքում: Այս վերլուծությունը ցույց է տալիս ազդանշանը կազմող հաճախականային հարմոնիկների ուժեղացման գործակիցները:

Ազդանշանի սպեկտրային բնութագրից (նկ. 1.15) հեշտությամբ կարելի է չափել թե՛ $A_{\text{օսւ}}$ օգտակար ազդանշանի, և թե՛ $A_{\text{աղ}}$ աղմուկի ուժեղացման գործակիցները և ԱԱՀԳ-ն: Փոփոխելով ԱԱՀԳ-ն՝ կարելի է ստանալ դրա կախվածությունը համակարգի ՓՏՍ – ից (նկ. 1.16):



Նկ. 1.15. Ազդանշանի սպեկտրային բնութագիրը



Նկ. 1.16. ԱԱՀԳ-ից ազդանշանի ՓՏՍ-ի կախվածությունը

Քանի որ ԱԱՀԳ-ի մեծացմանը զուգընթաց փոքրանում է աղմուկի բաժինը օգտակար ազդանշանի մեջ (նկ. 1.16), ապա դա կհանգեցնի փոխանցվող ազդանշանի տրամաբանական սխալների քանակի փոքրացմանը:

Ուստի ազդանշանի կարգման և հաստատման ժամանակային պաշարների մեծացումը ևս կհանգեցնի ՓՏՍ – ի փոքրացմանը: Հետևաբար՝ անհրաժեշտ է ունենալ ԳԼԶ-ից անկախ կարգման և հաստատման ժամանակային պաշարներ, որոնք կբացառեն հնարավոր թրթռոցի և տվյալի սխալանքի առակայությունը տվյալի փոխանցման ժամանակ:

1.2.3. Հաղորդչում և ընդունիչում ազդանշանի համաձայնեցման խնդիրները


Մ/Ե սարքերում հոսքուղով ազդանշանի փոխանցման ընթացքում ազդանշանի անդրադարձման պատճառով տեղի է ունենում աղավաղում: Ազդանշանի աղավաղումները առաջանում են ՀՀԸ համակարգերում դիմադրությունների անհամաձայնեցումից: Անդրադարձումը հոսքուղով հաղորդված ազդանշանի վերադարձն է, որը որոշակի հապաղումից հետո վերադարձվելով հաղորդվող ազդանշանին՝ աղավաղում է այն: ՀՀԸ համակարգով ազդանշանի անդրադարձման գործակիցը (Γ) [63-69] որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Gamma = \frac{Z_{\text{հոս}} - Z_{\text{հաղ}}}{Z_{\text{հոս}} + Z_{\text{հաղ}}}, \quad (1.6)$$

որտեղ $Z_{\text{հոս}}$ -ը հոսքուղու ալիքային դիմադրությունն է, $Z_{\text{հաղ}}$ -ը՝ հաղորդչի ալիքային դիմադրությունը:

Անդրադարձման արդյունքում տեղի է ունենում ոչ միայն հաղորդվող ազդանշանի աղավաղում, որը արտահայտվում է ազդանշանի մարող տատանման ձևով (նկ. 1.17), այլ նաև ազդանշանի հապաղում ընդունիչի մուտքում:

Արդյունքում անդրադարձումից առաջացած ազդանշանի աղավաղումները նպաստում են դրա սխալ ընթերցման հավանականության աճին, ինչն էլ իր հերթին մեծացնում է ՓՏՍ-ի արժեքը:



Նկ. 1.17. Ազդանշանի անդրադարձումը

Ադրադարձումից պաշպանվելու հիմնական ուղին ՀՀԸ համակարգի դիմադրությունների համաձայնեցումն է: Քանի որ հիմնական դեպքերում հոսքուղու դիմադրությունը սահմանված է ստանդարտով, ապա համաձայնեցման հիմնական ճանապարհը հաղորդչի ելքային և ընդունիչի մուտքային դիմադրությունների հավասարեցումն է հոսքուղու դիմադրությանը: Գրականությունից հայտնի են մի քանի դիմադրությունների համաձայնեցման մեթոդներ [16,17], որոնց աշխատանքի սկզբունքը հիմնված է կիսահաղորդչային բյուրեղից դուրս գտնվող բավականին ճշտգրիտ էլեկտրական պարամետրերով տարրերի վրա: Այս մեթոդներն ունեն մի քանի թերություններ՝

1. կիսահաղորդչային բյուրեղից մեկից ավելի ելուստի առկայություն և լրացուցիչ մակերեսի ծախս,
2. կիսահաղորդչային բյուրեղի և արտաքին տարրի հողակցման պոտենցիալի համաձայնեցում,
3. Մ/Ե հանգույցի համապիտանելիության փոքրացում,
4. հզորության ծախս:

Արդյունքում՝ անհրաժեշտություն է առաջանում ունենալ դիմադրությունների համաձայնեցման ինտեգրված մեթոդ, որը կաշխատի առանց արտաքին գերճշգրիտ տարրի օգտագործման:

Բացի ազդանշանի անդրադարձման երևույթից, առկա է ազդանշանն աղավաղող մեկ այլ երևույթ, որը կոչվում է փոխնշանային ինտերֆերենց (ՓԻ): ՓԻ-ն

առաջանում է, երբ հոսքուղով տվյալ փոխանցելիս ընթացիկ բիթերը վերադրման պատճառով աղավաղում են հաջորդ բիթերը (նկ 1.18):

ՓԻ-ի պատճառով աղավաղվում է տվյալի ազդանշանի աչքի դիագրամը: ՓԻ-ի առաջացման հիմնական պատճառը տվյալների զուգահեռ փոխանցումն է կամ հոսքուղու ոչ գծային հաճախականային հակազդումը:


ՓԻ-ի ներմուծած աղավաղումները կարելի է նկարագրել հետևյալ բանաձևով՝

$$y(t) = \sum_{n=-\infty}^{\infty} x[n] * h(t - nT), \quad (1.7)$$

որտեղ $y(t)$ –ն t -րդ պահի ազդանշանն է ընդունիչի մուտքում, $x[n]$ –ը՝ n -րդ ուղարկված բիթը է, $h(t)$ –ն՝ հոսքուղու հաճախականային արձագանքը, T –ն՝ ուղարկվող ազդանշանի պարբերությունը:

ՓԻ-ի արդյունքում ՓՏՍ-ի նվազեցումը կատարվում է տարբեր տեսակի աղապատացվող համահարթեցման մեթոդներով, որոնք երկու տիպի են.

1. հաղորդչում ազդանշանի ամպլիտուդահաճախականային համահարթեցում,
2. ընդունիչում հոսքուղու հաճախականային վարքի համահարթեցում:



Նկ. 1.18. Ազդանշանի վրա ՓԻ-ի ազդեցությունը

Գրականությունից հայտնի են ամահարթեցման մի քանի հ լուծումներ [70-81], սակայն, քանի որ Մ/Ե համակարգերի ստադարտները շատ են, և յուրաքանչյուրն ունի իրեն հատկացված հոսքուղի՝ համապատասխան հաճախականային բնութագրով, և աշխատում է տարբեր աշխատանքային հաճախությամբ ու ռեժիմով, ապա անհրաժեշտություն է առաջանում ունենալ այնպիսի համահարթեցման համակարգ [131,132], որը կախված այդ գործոններից՝ հնարավորություն է տալիս համահարթեցնել ՀՀԸ համակարգի հաճախականային վարքը: Արդյունքում՝ կփոքրանա համահարթեցնող համակարգի նախագծման վրա ծախսվող ժամանակը, և կմեծանա Մ/Ե հանգույցի համապիտանիությունը:

1.3. Մուտք/ելք հանգույցներում տվյալի ազդանշանի և սինքրոազդանշանի փոխային համաձայնեցման առկա միջոցները

Տվյալների փոխանցման զուգահեռ և հաջորդական փոխանցման Մ/Ե համակարգերից շատերում փոխանցվում է միայն տվյալի ազդանշանը, իսկ սինքրոազդանշանը վերականգնվում է արդեն ընդունիչում: Սա պայմանավորված է մեծ հաճախությամբ սինքրոազդանշանի փոխանցման դժվարություններով: Սակայն միայն տվյալի ազդանշանի փոխանցումը ևս ունի իր դժվարությունները: Մասնավորապես ընդունիչում տվյալի հուսալի ընթեցման համար անհրաժեշտ է որոշակի փուլով սինքրոազդանշան: Սակայն աղմուկներից և ԳԼՋ-ից կախված՝ տվյալի ազդանշանի փուլը ևս փոփոխվում է: Ուստի սինքրոազդանշանի փուլը ևս տվյալի ազդանշանի փուլի հետ մեկտեղ պետք է փոփոխվի: Այս մոտեցումը հիմնական տեղ է գտել երկար հոսքուղի ունեցող Մ/Ե հանգույցներում, քանի որ դրանցով բարձր հաճախականային ազդանշանների փոխանցումը առաջացնում է լրացուցիչ բարդություններ, որոնց լուծումը գործնականորեն շահավետ չէ:


Արդյունքում՝ անհրաժեշտ է մի համակարգ, որը ոչ միայն տվյալի ազդանշանից կվերականգնի սինքրոազդանշանի փուլը, այլ նաև դինամիկ կերպով կհետևի տվյալի ազդանշանի փոխային շեղումներին: Բացի այդ պահանջներից, համակարգը նաև պետք է աշխատի տարբեր աշխատանքային հաճախություններում և ռեժիմներում:

1.3.1. Մուտք/Ելք հանգույցի ընդունիչում տվյալի ազդանշանից ինքնակարգաբերմամբ սինքրոազդանշանի փուլի վերականգնման համակարգը

Գրականությունից հայտնի են [21-28] Մ/Ե հանգույցների ընդունիչներում սինքրոազդանշանի փուլի վերականգնման համակարգերի (ՍՓՎՀ) տարբեր ճարտարապետություններ: Այդ համակարգերի հիմնական նպատակն է վերականգնել տակտային ազդանշանի այն փուլը, որով աշխատել է հաղորդիչը տվյալը ուղարկելիս: Ճիշտ փուլը գտնելուց հետո (նկ. 1.19) այն պետք է օգտագործվի տվյալի ազդանշանի ընթերցման նպատակով:

Բացի նրանից, որ պետք է գտնել տվյալը ընթերցող այնպիսի փուլով տակտային ազդանշան, որի դեպքում ՓՏՍ-ն կլինի հնարավորինս նվազագույնը, այլև, հաշվի առնելով ընդունիչի մուտքային ազդանշանի թրթռոցը, պետք է տակտային ազդանշանի փուլը նույնպես ունենա համապատասխան փուլի դինամիկ փոփոխություն:

Հուսալի ընթերցման համար տակտային ազդանշանի փուլը պետք է լինի տվյալի ազդանշանի ամենաարագ փոփոխությամբ տեղամասի մեջտեղում: Այդ դեպքում, ընդունիչի մուտքում տվյալի ազդանշանի անգամ թրթռոցի առակայության պարագայում, հավաստի ընթերցման հավանականությունը մեծանում է:




Նկ. 1.19. Փուլի վերականգնման համակարգի ժամանակային դիագրամները

Դասական փուլի վերականգնման համակարգերի կառուցվածքները հիմնված են փուլահաճախականային ինքնաենթալարման համակարգի (ՓԻՀ) [82-92] ճարտարապետության վրա (նկ. 1.20): Մուտքային տվյալի ազդանշանը կիրառվում է D տիպի տրիգերին և միարժամանակ փուլի դետեկտորին (ՓԴ) [93]: ՓԴ-ն համեմատում է մուտքային ազդանշանի և համակարգի հետադարձ կապի մեջ գտնվող հաճախության բաժանիչի փուլերի հետ և գեներացնում դրանց տարբերության չափով ազդանշան: Այնուհետև այդ ազդանշանն ինտեգրվում է ինտեգրիչով կամ լիցքի պոմպով [94-99] և փոխանցվում լարմամբ ղեկավարվող գեներատորին (ԼԴԳ) [100-102]: Գեներացված սինքրոազդանշանը կիրառվում է և՛ D տրիգերին որպես տակտային ազդանշան, և՛ հաճախության բաժանիչի (ՀԲ) մուտքին (նկ. 1.20): Որպես հաճախականային բաժանիչ կարելի է օգտագործել դասական հետադարձ կապով D տրիգերի սխեման:

Արդյունքում՝ D տրիգերի տակտային ազդանշանն ունենում է երկու անգամ մեծ հաճախություն և փուլով տվյալի ազդանշանի նկատմամբ գտնվում է ճիշտ դիրքում (նկ. 1.19):

Բացի նրանից, որ համակարգը վերականգնում է մուտքային տվյալը հուսալի ընթերցող տակտային ազդանշանի փուլը, այլ աշխատում է նաև դինամիկ ռեժիմով և հետևում է մուտքային ազդանշանի թրթռոցին:


Քանի որ տվյալի ազդանշանն ունի պատահական բնույթ, հետևաբար՝ այն չի փոխանցատվում ամեն մի տակտային ազդանշանի պարբերության ընթացքում:



Նկ. 1.20. Փուլահաճախականային ինքնաենթալարման համակարգի
ճարտարապետության հիմքով փուլի վերականգնման համակարգը

Հետևաբար՝ ՓԴ-ն պետք է տվյալի փաթեթից դետեկտի միայն տրամաբանական «0»-ից «1» և հակառակ փոխանջատումները: Ներկայացված ՓԴ-ի ճարտարապետությունը (նկ. 1.21) գրականությունում հայտնի է որպես «Հոգգի մեթոդ» [8,24,37]: Այն աշխատում է տակտային ազդանշանի երկու ճակատներով և դետեկտում է տվյալի ազդանշանի փոխանջատումը: Եթե $T_{տա}$ -ը տակտային ազդանշանի պարբերությունն է, իսկ տվյալի ազդանշանը տակտայինից փուլով առաջ է ընկած ΔT - ով, ապա $V_{տ1}$ -ում, որը հավասար է $U \oplus F$, ձևավորվում է ΔT չափով ազդանշան: $V_{տ2}$ - ում, որը հավասար է $F \oplus T$, ամեն տվյալի ազդանշանի ճակատի համար ստացվում է $T_{տա} / 2$ չափով ելքային ազդանշան: Արդյունքում՝ $V_{տ1}$ - ի և $V_{տ2}$ - ի տարբերությունը հավասար կլինի տակտային և տվյալի ազդանշանների փուլային շեղմանը:

Դասական Մ/Ե սարքերում [2-7] օգտագործվող փուլի վերականգնման համակարգերը հիմնականում ունեն սահմանափակ աշխատանքային հաճախության շերտ և պիտանի չեն այլ ստանդարտի Մ/Ե սարքերի համար: Աշխատանքային հաճախության հիմնական սահմանափակող հանգույցը լարմամբ ղեկավարվող գեներատորն է, իսկ հետադարձ կապով հապաղման սարքերի (տե՛ս 1.3.2-ում) հիման վրա ՍՓՎՀ-ի դեպքում՝ լարմամբ ղեկավարվող հապաղման գիծը (ԼՂՀԳ):



Նկ. 1.21. Փուլային դեպրեկտորի բոլոր-դիագրամը


Հետևաբար՝ անհրաժեշտություն է առաջանում նախագծել համապիտանի ՍՓՎՀ, որը կաշխատի լայն հաճախականային տիրույթում և կբավարարի տարբեր աշխատանքային հաճախությամբ ու ռեժիմով աշխատող Մ/Ե հանգույցների ստանդարտներին ներկայացվող պահանջները:

1.3.2. Հապաղման սարքերում աշխատանքային հաճախականային շերտի մեծացման կարևորությունը

Հապաղման հետադարձ կապով սարքերը (ՀՀԿՍ) [103-105] օգտագործվում են Մ/Ե հանգույցներում տարբեր ենթահանգույցների սինքրոազդանշանների փուլային համաձայնեցման նպատակով, ինչպես նաև տվյալների և սինխրոազդանշանի ազդանշանների համապատասխանեցման համար, միմյանցից խիստ որոշակի հապաղմամբ շեղման եղանակով: ՀՀԿՍ-ը հետադարձ կապով համակարգ է, որի մուտքում կիրառվում է հենակային սինքրոազդանշան, իսկ ելքում ստացվում են նույն հաճախության ազդանշանի տարբեր փուլային շեղումները: ՀՀԿՍ-ի հիմնական նպատակն է ստանալ պահանջվող ճշտությամբ փուլային շեղվածությամբ ազդանշան և բավարարել մուտքային ազդանշանի հաճախությանը: ՀՀԿՍ-ի աշխատանքային հաճախականային շերտը սահմանափակ է, և ստանալ լայն հաճախականային շերտով ՀՀԿՍ՝ օգտագործելով դասական ճարտարապետությունը (նկ. 1.22), գրեթե անհնար է: Ցանկալի հաճախականային շերտի լայնությունը կախված է Մ/Ե հանգույցի տարբեր ռեժիմներից և հնարավորինս տարբեր ստանդարտներին բավարարելու պայմանից: Լայն հաճախականային շերտ ստանալու համար անհրաժեշտ է գնահատել ՀՀԿՍ-ի բոլոր ենթահանգույցների հաճախականային բնութագրերը և հաշվի առնել դրանց համատեղելիությունը: Սակայն հաճախականային շերտի հիմնական սահմանափակող ենթահանգույցը ԼՂՀԳ-ն է: Մեկ տիպի ԼՂՀԳ-ով ստանալ լայն հաճախականային շերտ դժվար է, քանի որ ԼՂՀԳ-ի կասկադներից յուրաքանչյուրն ունի վերջավոր տարածման հապաղում: Այդ հապաղումը ղեկավարվում է անալոգային լարմամբ, որը գեներացնում

է լիցքի պոմպը (ԼՊ): Հոսանք – լարում փոխակերպիչը ձևավորում է ԼՊ-ի ելքային հոսանքին համապատասխան լարում (նկ. 1.22):


ՀԼՓ-ը կարող է հանդես գալ ուղղակի որպես ունակություն, որը լիցքավորվում և լիցքաթափվում է՝ ԼՊ-ի հոսանքի մեծությունից և ուղղությունից կախված:



Նկ. 1.22. Դասական ՀՀԿՄ-ի բլոկ-դիագրամը

ՀՀԿՄ-ի ելքում ստացված փուլերի քանակը նույնպես կախված է ԼՂՀԳ-ի [106-109] կասկադների քանակից: Երբ համակարգը համալարվում է, 0° և 360° փուլերի տարբերություն հավասարվում է 0-ի, ՀՀԿՄ-ի ելքային փուլերը համապատասխանաբար մեծ ճշտությամբ ձևավորում են մնացած բոլոր փուլերը: Եթե հենակային ազդանշանի փուլը թրթռոցի պատճառով շեղվում է, ապա հետադարձ կապը փորձում է զրոյացնել այդ տարբերությունը և կրկին համալարել համակարգն այնպես, որ հենակային և հետադարձ կապի ազդանշանների փուլերը համընկնեն:

Որպեսզի հասկանալի լինի ՀՀԿՄ-ի պարամետրերի կայունությունը պետք է դիտարկել դրա գծային մոդելը (նկ. 1.23): I_η – ն ՀԼՓ-ի մուտքային հոսանքն է, իսկ $K_{ԼՂՀԳ}$ – ն՝ ԼՂՀԳ-ի ուժեղացման գործակիցը: Փոխանցման ֆունկցիայից (1.8) երևում է, որ, ի տարբերություն ՓԻՀ-ի, ՀՀԿՄ-ն ունի առաջին կարգի փակ ցիկլի արձագանք և կայունության հարցում ավելի մեղմ է:



Նկ. 1.23. ՀՀԿՄ-ի գծային մոդելը


ՀՀԿՍ-ի փոխանցման ֆունկցիան կլինի՝

$$H(s) = \frac{1}{1 + \frac{I_{T1} K_{L\Gamma\Delta\Theta}}{2\pi C} s}, \quad (1.8)$$

որտեղ $K_{L\Gamma\Delta\Theta}$ – ն $L\Gamma\Delta\Theta$ -ի ուժեղացման գործակիցն է, I_{T1} –ն՝ ղեկավարման հոսանքը:

Հապաղման գծերը, համեմատած լարմամբ ղեկավարվող գեներատորների, հիմնականում ավելի կայուն են աղմուկների նկատմամբ, քանի որ համակարգում առաջացող լարման թռիչքները հապաղման գծի վերջում վերանում են, իսկ գեներատորներում դրանք հետադարձ կապի պատճառով վերարտադրվում են:

Գրականությունից հայտնի են տարբեր ճարտարապետությամբ հապաղման գծեր [106-108], որոնցից դիֆերենցիալ $L\Gamma\Delta\Theta$ -ն (նկ. 1.24) բաղկացած է n քանակի կասկադներից և որոնցից յուրաքանչյուրը իրենից ներկայացնում է դիֆերենցիալ մուտքերով (V_{i+} , V_{i-}) և ելքերով սխեմա (V_{i+} , V_{i-}): Հապաղումը ղեկավարվում է V_{η} լարմամբ: Փոփոխելով V_{η} լարումը, փոխվում է $S1$ և $S2$ տրազիստորներով հոսող հոսանքը և հետևաբար՝ նաև ելքային ազդանշանի փոխանջատման արագությունը:




Նկ. 1.24. Դիֆերենցիալ $L\Gamma\Delta\Theta$ -ը

Քանի որ մուտքային n տիպի տրանզիստորները աշխատանքային պայմաններում գտնվում են հազեցած ռեժիմում, հետևաբար, մուտքային լարումից կախված՝ ճյուղերում հոսանքը փոխվում է քառակուսային օրենքով: Դիողային միացված p տիպի տրազիստորները նախատեսված են՝ ապահովելու համակարգի

ՎԱԲ-ի գծայնությունը: Դիֆերենցիալ ԼՂՀԳ-ի տվյալ ճարտարապետությունն ապահովում է մինչև 500 ՄՀg աշխատանքային հաճախություն և ունի մեծ աղմկակայունություն:

ԼՂՀԳ-ի մեկ այլ ճարտարապետություն է միաազդանշանային սխեման, որը հիմնված է շրջիչների վրա (նկ. 1.25):




Նկ. 1.25. Շրջիչի հիման վրա ԼՂՀԳ-ը

Առաջին կասկադի ելքում ազդանշանի աճման և անկման ժամանակները փոխվում են V_n ազդանշանից կախված: Երկրորդ կասկադը նախատեսված է ազդանշանի ուժեղացման համար: Տվյալ ճարտարապետությամբ ԼՂՀԳ-ը աշխատանքային հաճախությունը հասնում է մինչև 5 ԳՀg-ի, սակայն այն, համեմատած դիֆերենցիալ ԼՂՀԳ-ի հետ, աղմուկների նկատմամբ ավելի զգայուն է: ԳԼԶ-ից կախված աշխատանքային հաճախականության շերտը կարող է փոխվել:

Հայտնի է նաև հապաղման գծերի մեկ այլ տեսակ, որի հապաղման չափը ղեկավարվում է թվային կոդով (նկ. 1.26): Այս հապաղման գծի ամեն մի կասկադից հետո միացված են F0, F1 և F2 թվային կոդով ղեկավարվող ունակություններ (C0, C1 և C2):

Կողից կախած՝ փոխվում է ամեն մի կասկադի հապաղումը: Սակայն այս հապաղման գծի թերությունն այն է, որ հապաղման փոփոխման քայլը դիսկրետ է: Այս հապաղման գծերն ապահովում են մինչև 2.5-ից 3 ԳՀգ աշխատանքային հաճախություն:




Նկ. 1.26. Թվային կողով ղեկավարվող հապաղման գիծը

ՀՀԿՍ-ները օգտագործվում են Մ/Ե սարքերում, որպես համակարգի տարրեր մասերի միջև ազդանշանների հապաղումները համաձայնեցնող հանգույց: Նաև ՀՀԿՍ-ն օգտագործվում է ՍՓՎՀ-ում որպես ենթահանգույց (նկ. 1.27): ՍՓՎՀ-ի այս տարրերակում մուտքային տվյալի ընթացման համար օգտագործվում է նույն տվյալի ազդանշանը 90° փուլով շեղված: Համակարգում օգտագործվում ԼՂՀԳ-ի կրկնօրինակը, որի մուտքին տրվում է ընդունիչի մուտքային ազդանշանը՝ հենակային ազդանշանի փոխարեն: ԼՂՀԳ կրկնօրինակի լարմամբ ղեկավարվող մուտքին տրվում է նույն ազդանշանը, ինչ միացված է իրական ԼՂՀԳ-ին ՀՀԿՍ-ի մեջ (նկ. 1.27): ԼՂՀԳ-ի կրկնօրինակի օգտագործումը թույլ է տալիս, նույն պայմաններում գտնվող հանգույցը օգտագործելով, ստանալ անհրաժեշտ փուլով ազդանշան:

Արդյունքում՝ ԼՂՀԳ-ի կրկնօրինակի ելքում ձևավորվում է ընդունիչի մուտքային ազդանշանի 90° շեղված ազդանշան, որը կիրառելով D տրիգերի մուտքին՝ կարելի է մեծ հուսալիությամբ ընթերցել մուտքային տվյալը ՓՏՍ-ի հնարավորինս նվազագույնը արժեքով:

ՀՀԿՍ-ի կիրառմամբ ՍՓՎՀ-ի այս ճարտարապետությունը միակը չէ: Առաջարկված է նաև նոր մշակված լայն հաճախականային տիրույթով ՀՀԿՍ-ի կիրառմամբ ՍՓՎՀ-ի ճարտարապետությունը [133]:



Նկ. 1.27. ՀՀԿՍ-ի կիրառմամբ ՍՓՎՀ-ը

Այսպիսով, ՀՀԿՍ-ների կիրառումը Մ/Ե սխեմաներում սահմանափակվում է դրանց աշխատանքային հաճախականային շերտով, որի մեծացման խնդիրը արդիական է, քանի որ Մ/Ե ստանդարտները բազմազան են, և բազմազան են նաև դրանց աշխատանքային ռեժիմները: Այս խնդրի լուծումն օգնում է փոքրացնելու ՀՀԿՍ-ների վրա ծախսվող նախագծման ժամանակը և դարձնում է դրանք ավելի համապիտանի:

1.4. Մուտք/ելք հանգույցներում դիմադրությունների համաձայնեցման առկա խնդիրները

Ինչպես նշված է 1.2.3-ում, մեծ հաճախությամբ ազդանշանի հոսքուղով փոխանցման ընթացքում առաջանում է ազդանշանի անդրադարձում, որն աղավաղում է օգտակար ազդանշանը և դժվարացնում տվյալի ընթերցման գործընթացը ընդունիչում: Այդ խնդրի լուծման նպատակով կատարվում է ՀՀԸ համակարգի դիմադրությունների համաձայնեցում: ԴՀՀ-ն, որը Մ/Ե համակարգի

դիմադրությունների համաձայնեցնող ենթահանգույցն է, համաձայնեցնում է հաղորդչի ելքային և ընդունիչի մուտքային դիմադրությունները հոսքուղու դիմադրությանը, որը սահմանված է ստանդարտով:


Այդպիսի ստանդարտի օրինակ է համապիտանի հաջորդական դողը (ՀՀԴ) [4,5], որը լայնորեն օգտագործվում է ժամանակակից գրեթե բոլոր էլեկտրոնային սարքավորումներում: ՀՀԴ-ի հոսքուղին ունի կոաքսիալ կառուցվածք, որը ներկայացնում է բազմաշերտ մեկուսացումով գլանաձև մալուխ (նկ. 1.28): Այդ մեկուսացումները նախատեսված են մալուխի ներքին ազդանշանները արտաքին աղմուկներից պաշտպանելու նշատակով: Այս մեթոդը կոչվում է էկրանավորում:

ՀՀԴ 2.0 ստանդարտի հոսքուղին բաղկացած է չորս դողերից, որոնցից երկուսը՝ սնուցման և հողակցման, իսկ մյուս երկուսը դիֆերենցիալ տվյալի ազդանշանի դողերն են:

Տրված արտաքին D տրամագծով և ε մեկուսչի դիէլեկտրիկ թափանցելիությամբ կոաքսիալ մալուխի իմպեդանսը (Z_0) որոշվում է (1.9)-ով:

$$Z_0 = \frac{138}{\sqrt{\varepsilon}} * \log\left(\frac{D}{d}\right), \quad (1.9)$$


որտեղ d –ն ներքին հաղորդչի տրամագիծն է, D –ն՝ մալուխի տրամագիծը, ε –ը՝ մեկուսչի դիէլեկտրիկ թափանցելիությունը:



Նկ. 1.28. ՀՀԴ 2.0 ստանդարտի հոսքուղու լայնական կտրվածքը

ՀՀԴ-ի ստանդարտով հոսքուղու դիմադրությունը 50 Օմ է: Դիմադրության այս ընտրությունը կատարվել է ոչ պատահականորեն: Հոսքուղով ազդանշանի տարածման դեպքում անհրաժեշտ է գնահատել առավելագույն թույլատրելի հզորությունը, որի դեպքում կարելի է բացառել այն դիէլեկտրիկի ծակման հավանականությունը, որը մեկուսացնում է դողերը: Սակայն, մյուս կողմից պետք է հաշվի առնել ազդանշանի կորուստը հոսքուղու միավոր երկարության դեպքում: Արդյունքում պետք է ընտրել այնպիսի դիմադրություն, որն ապահովում է հզորության նվազագույն ծախս և լարման առավելագույն ուժեղացում: Փորձնական ճանապարհով ստացված գրաֆիկը (նկ. 1.29) ցույց է տալիս, որ ՀՀԴ-ի կոաքսիալ հոսքուղում նվազագույն հզորության ծախսը նկատվում է 30 Օմ դիմադրության, իսկ նվազագույն լարման կորուստը՝ 77 Օմ-ի դեպքում:

Քննարկված երկու ցուցանիշների լավագույն արժեքների հանրահաշվական միջինը հավասար է 53.5 Օմ-ի, իսկ երկրաչափականը՝ 48 Օմ-ի: 50 Օմ-ը համարվում է լավագույն փոխզիջումային տարբերակ՝ թույլատրելի հզորությամբ և միավոր երկարությամբ հոսքուղում տարածվող ազդանշանի կորստի միջև:



Նկ. 1.29. Հոսքուղու դիմադրության և հզորության կամ լարման կորուստների կախվածությունը

Քանի որ U/E սարքերում հոսքուղու դիմադրությունը սահմանված է ստանդարտով, հետևաբար՝ ազդանշանի անդրադարձումից խուսափելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում հաղորդչի ելքային և ընդունիչի մուտքային դիմադրությունները հավասարեցնել հոսքուղու դիմադրությանը:


Հայտնի դիմադրության կարգաբերման կամ համաձայնեցման մեթոդների հիմնական խնդիրներից է համակարգի մեկանգամյա կարգաբերումը: ՀՀԴ-ի ստանդարտի դեպքում ընդունիչի և հաղորդչի դիմադրությունների կարգաբերումը կատարվում է մեկ անգամ: Երբ ընդունիչը միացվում է հաղորդչին, և հաղորդիչը հայտնաբերում է ընդունիչի առկայությունը, ԴՀՀ-ն սկսում է կարգաբերման գործընթացը, և այնուհետև սկսվում է տվյալների փոխանցումը: Սակայն այդ ընթացքում, քանի որ ԿԲ-ում ինտեգրալ դիմադրությունների չափը կախված է ջերմաստիճանից, տվյալների փոխանցման ընթացքում կարգաբերված դիմադրությունը շեղվում է իր սկզբնական արժեքից: Արդյունքում՝ ջերմաստիճանից կախված կարող է փոխվել անդրադարձման չափը և հետևաբար՝ տվյալների ճշգրիտ փոխանցման հավանականությունը:

Քանի որ դժվար է ԿԲ-ի վրա ստանալ ԳԼՁ-ից անկախ կայուն բաղադրիչ, հետևաբար՝ դիմադրությունների կարգաբերման համակարգերի աշխատանքը հիմնականում հիմնված է արտաքին կայուն տարրի վրա, որն նվազեցնում է Մ/Ե սարքի համապիտանիություն: Կարգաբերումը կատարվում է կայուն տարրի հետ համեմատության սկզբունքով: Սակայն այս սկզբունքի թերությունն այն է, որ այդ արտաքին կայուն տարրի պայմանները, մասնավորապես աղմուկները, լարման անկումները սնուցման կամ հողակցման վրա, ԿԲ-ի ներսում գտնվող տարրերի համեմատ տարբեր են, և ստանալ համատեղ կոմպոնենտներ գրեթե անհնար է:

Խնդրի լուծման մեկ այլ ճանապարհ է տպասալային ճշգրիտ դիմադրությունը օգտագործել նույն տպասալի վրա գտնվող մի քանի Մ/Ե համակարգեր համար: Սակայն այդ դեպքում մեծանում է բոլոր Մ/Ե համակարգերի ընդհանուր միջմիացման մակարձային ունակությունը, որը ազդում է ԴՀՀ-ի հաստատման գործընթացների վրա և դանդաղացնում դրանց: Ուստի այս լուծումը ևս արդյունավետ չէ:

1.4.1. Արտաքին կայուն տարրի վրա հիմնված դիմադրության համաձայնեցման ակնարկ

Գրականության մեջ հայտնի են դիմադրության համաձայնեցման մի շարք համակարգեր [16,17], որոնց աշխատանքը հիմնված է արտաքին R1 կայուն դիմադրության վրա (նկ. 1.30): ԴՀՀ-ում օգտագործվում են հաղորդչի և ընդունիչի դիմային կասկադների կրկնօրինակները: Համակարգի աշխատանքը բաղկացած է 2 փուլից: Առաջին փուլում աղբյուրից հոսանքը անցնում է հաղորդչի կրկնօրինակով, ապա՝ R1-ով: Այնուհետև համեմատիչը համեմատում է ձևավորված լարման անկումները և արդյունքից կախված ղեկավարող հանգույցը թվային կոդով փոխում է կրկնօրինակի դիմադրությունը: Գործընթացը կրկնվում է այնքան անգամ, մինչև երկու լարման անկումները հավասարվեն միմյանց: Յուրաքանչյուր համեմատությունից հետո համեմատիչը թվային կոդ է հաղորդում ղեկավարման հանգույցին: Այդ կոդը հիշվում է ռեգիստրում և կարգաբերման վերջում կիրառվում է իրական հաղորդչին: Երկրորդ փուլում այս գործընթացը կրկնվում է ընդունիչի համար:



Նկ. 1.30. Արտաքին կայուն դիմադրության վրա հիմնված ԴՀՀ-ն

Արտաքին դիմադրությունը սովորաբար ընտրվում է անհրաժեշտ դիմադրությունից չորս անգամ մեծ և ունի $\pm 1\%$ ճշտություն, քանի որ այդ դեպքում ԿԲ-ի վրա հաղորդչի և ընդունիչի կրկնօրինակների զբաղեցրած մակերեսը փոքր է: ՀՀԴ ստադարտի համար այն 200 Օմ է: Կարգաբերման արդյունքում ստացված կողը ղեկավարող հանգույցը թվային վերլուծությունից հետո կիրառում է հաղորդչին և ընդունիչին:

Արտաքին կայուն դիմադրության օգտագործման թերություն է նաև լրացուցիչ մակերեսի ծախսը: ԿԲ-ի և պատյանի կոնտակտային հրապարակները բավականին մեծ մակերես են զբաղեցնում: Սակայն ավելի զգալի թերություն է արտաքին կայուն տարրի վրա հիմնված ԴՀՀ-ի ոչ համապիտանելիությունը, քանի որ այն կարելի է օգտագործել միայն այն ստանդարտի Մ/Ե հանգույցներում, որտեղ առկա է արտաքին տպասալային դիմադրություն:

Արդյունքում՝ անհրաժեշտ է նախագծել այնպիսի ԴՀՀ-ը, որի չի պահանջում ԿԲ-ից դուրս կայուն տարր, որն ունի կարգաբերման գործընթացի պարբերական բնույթ և


ապահովում է Մ/Ե ստանդարտներին համապատասխանող դիմադրության կարգաբերման ճշտություն:

1.5. Մուտք/ելք հանգույցներում տարբեր աշխատանքային ռեժիմներում սնման լարման անջատումից առաջացած խնդիրները

Մ/Ե հանգույցների այն ստանդարտներում, որոնք ունեն մեկից ավելի սնման կղզյակներ և նախատեսված են շարժական սարքերի [110-112] համար, տարբեր աշխատանքային ռեժիմներում անհրաժեշտություն է առաջանում սնուցումներից մեկը կամ մի քանիսը անջատել: Սնման լարումներից մեկի աջատումից հետո հիմնական խնդիրները առաջանում են տարբեր սնուցումներով աշխատող մասերի կոնֆլիկտային հատվածներում (նկ. 1.31):


Օրինակ, եթե Բ-ՄՕԿ տրանզիստորի հարթակը միացված է սնուցումներից մեկին, որը պետք է ինչ-որ պահից անջատել, ապա կարող է առաջանալ կորուստային հաստատուն հոսանքի ճանապարհի ակունք-հարթակ կամ արտաբեր-հարթակ Բ-ո անցումներով: Կախված նրանից, թե տրանզիստորի ակունքը կամ արտաբերը ինչ պոտենցիալի են միացված, այդ կորստի հոսանքը կարող է լինել մեծ կամ փոքր:

Կորստի հոսանքների մեծ լինելը առավել կրիտիկական է այն Մ/Ե սարքերում, որոնք նախատեսված են շարժական համակարգերում օգտագործման համար:



Նկ. 1.31. Բազմասնուցումային համակարգի ճարտարապետությունը

Ներկայացված օրինակում (նկ. 1.32) P-ՄՕԿ տրանզիստորը միացված է Սնուցում 1-ից սնվող հանգույցին, սակայն հարթակը միասված է Սնուցում 2-ին:



Նկ. 1.32. Բազմասնուցումային համակարգի կոնֆլիկտային տեղամաս

Երբ Սնուցում 2-ը հողանցվում է և ակունքի (S) պոտենցիալը բավարարում է, որպեսզի p-n անցումը լինի ուղիղ միացված, ապա ակունք – հարթակ (S-B) դիոդը ակունքի կետը կհողանցի:

$$i_{p-n} = I_0 (e^{\frac{V_{SB}}{V_{th}}} - 1) , \quad (1.10)$$

որտեղ I_0 -ն p-n անցման կորստի հոսանքն է, V_{SB} -ն՝ անցմանը կիրառված պոտենցիալների տարբերությունը, V_{th} -ն՝ p-n անցման շեմային լարումը:

(1.10)-ից երևում է, որ p-n անցման հոսանքը էքսպոնենցյալ օրենքով կախված է ակունք – հարթակ լարումից:

Արդյունքում՝ առաջանում է օհմական միացում Սնուցում 1-ից դեպի հողանցում, որը մեծացնում է հզորության ծախսը, և, ինչը ավելի վտանգավոր է, փոխվում է ակունքի պոտենցիալը, որը կարող է ազդել համակարգի աշխատանքի ճշտության վրա, ընդհուպ մինչև ամբողջական խափանումը:

Որպես լուծում, այսպիսի դեպքերում պետք է լինի այնպիսի մի հանգույց, որը Սնուցում 2-ի անջատելուց անմիջապես հետո ինքնակարգաբերմամբ տրագիստորի հարթակը միացնի ամենաբարձր պոտենցիալին և ակունք – հարթակ p-ո անցում հուսալիորեն փակի: Արդյունքում՝ փոքրանում են Մ/Ե հանհույցի տարբեր աշխատանքային ռեժիմներում հզորության ծախսը և պարամետրական սխալանքի հավանականությունը:

Եզրակացություններ

1. Մ/Ե սարքերի բազմաթիվ ստանդարտների և դրանց առաջադրվող տարբեր պահանջների առկայության պատճառով դրանց ենթահանգույցների աշխատանքային ռեժիմների կայունացման և համապիտանիության ապահովումը դարձել է արդիական:
2. Մ/Ե սարքերում ազդանշանների սխալանքների հիմնական պատճառներն են սխեմաներում առկա սնման լարման և տարրերի սեփական աղմուկները, տեխնոլոգիական շեղումները, մակաբույծ տարրերը և ջերմաստիճանը, որոնք պայմանավորում են դրանց լավարկման առաջնահերթությունը:
3. Ինքնակարգաբերմամբ համակարգերի ներմուծումը փոքրացնում է նախագծման ժամկետը և մեծացնում համակարգի համապիտանիությունը, ինչը հանգեցնում է ԳԼՋ-ից անկախ ազդանշանի ձևավորմանը և նպաստում Մ/Ե սարքերում տարբեր աշխատանքային ռեժիմների կայունացմանը:
4. Մ/Ե սարքերում փոխանցված տվյալի սխալանքի փոքրացման հիմնական ուղին ԳԼՋ-ից անկախ ազդանշանի կարգման և հաստատման

Ժամանակային պաշարների մեծացումն է, որոնք տվյալի փոխանցման ժամանակ բացառում են հնարավոր հաճախականային թրթռոցի և սխալանքի առակայությունը:

5. Բազմասնուցումային Մ/Ե սարքերում տարբեր աշխատանքային ռեժիմներում սնման լարումների անջատումներից հետո առաջացող ավելորդ էներգասպառումը և սխեմայի աշխատանքի սխալանքները առաջացրել են վերջիններս բացառող համակարգի նախագծման անհրաժեշտություն:

ԳԼՈՒԽ 2. ՄՈՒՏՔ/ԵԼՔ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՌԵԺԻՄՆԵՐԻ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

2.1. Հետադարձ կապով հապաղման սարքերի հաճախականային շերտի մեծացման ինքնակարգաբերմամբ մեթոդը

Ատենախոսության առաջին գլխում ամփոփված խնդիրները և թերությունները վկայում են այն մասին, որ աշխատանքային ռեժիմների կայունացման հարցը Մ/Ե սարքերում ծայրահեղ արդիական է դարձել: Տվյալներ փոխանցման արագության մեծացումն ավելի է փոքրացնում մեկ բիթ տվյալ ժամանակային պաշարը, ինչն ավելի է մեծացնում սխալանքների բաժինը ժամանակային միավոր հատվածում: Այս ամենը ևս մեկ անգամ ապացուցում է քննարկված խնդիրների լուծման արդիականությունը:

1.3.2-ում քննարկված առկա ՀՀԿՍ-երի ճարտարապետությունները և դրանց հաճախականային բնութագրերը տարբեր ԼԴՀԳ-ի դեպքում ունեն մի շարք թերություններ, որոնցից են.

1. Սահմանափակ է աշխատանքային հաճախականային տիրույթը, ինչը տարբեր աշխատանքային ռեժիմներում կրճատում է Մ/Ե սարքի աշխատունակությունը:

2. Բերված ճարտարապետությունները համատեղելի չեն բազմաթիվ Մ/Ե սարքերի ստանդարտներին: Արդյունքում՝ մեծանում է նախագծման վրա ծախսվող ժամանակը, ինչն էլ հանգեցնում է նախագծի արժեքի մեծացմանը:


3. Աշխատանքային հաճախականության տարբեր պահանջները դժվարություն են առաջացնում նաև նախագիծը մի քանի տարբեր տեխնոլոգիական գործընթացներով իրականացնելիս:

Ստորև առաջարկված են այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք կնպաստեն տարբեր ստանդարտների Մ/Ե սարքերում աշխատանքային ռեժիմների կայունացմանը և անկախ ԳԼՋ-ից ինքնակարգաբերվող ենթահանգույցների օգտագործմանը, կլինեն համատեղելի ԿՄՕԿ տեխնոլոգիայի հետ և չեն պահանջի արտաքին կայուն գործոնների կիրառություն:

Նշված պահանջները բավարարելու նպատակով ՀՀԿՍ-ում կիրառվել է ինքնակարգաբերմամբ գործող լիովին նոր լուծում՝ հիմնված է հենակային ազդանշանի հաճախության վրա: Կախված այդ հաճախությունից՝ համակարգն ապահովում է լայն հաճախականային տիրույթում աշխատող ՀՀԿՍ, որը համատեղելի է բազմաթիվ Մ/Ե սարքերի ստանդարտներին:

Դիտարկվել են տարբեր ճարտարապետությամբ ԼՂՀԳ-ների աշխատանքային հաճախականային բնութագրերը և դրանց մեծացման դժվարությունները:

Պատկերված են գրականությունից հայտնի ՀՀԿՍ-երի թույլատրելի հաճախականային շերտերի դիագրամները [113-118] (նկ. 2.1):




Նկ. 2.1. Հայտնի ՀՀԿՍ-ների հաճախականային շերտերը

Հայտնի ճարտարապետություններով ՀՀԿՍ-ները [113-118] ունեն սահմանափակ հաճախականային շերտ, և օգտագործել դրանք լայն հաճախականային տիրույթում հնարավոր չէ: Այս փաստը սահմանափակում է ՀՀԿՍ-ների օգտագործումը տարբեր Մ/Ե սարքերում կամ աշխատանքային տարբեր ռեժիմներում: Ստանալ մեկ ԼՂՀԳ-ով լայն հաճախականային տիրույթով ՀՀԿՍ գրեթե անհնար է:

ՀՀԿՍ-ում հենակային և հետադարձ կապի ազդանշանների փուլերի համեմատման ենթահանգույցը ՓԴ-ն է: Ժամանակակից ՓԴ-ների հաճախականային շերտը մի քանի ԿՀց-ից հասնում է մինչև ~ 4 ԳՀց-ի:

Արդյունքում ստացվում է, որ ՀՀԿՍ-ի ենթահանգույցներից հիմնական հաճախականային շերտը սահմանափակողը ԼՂՀԳ-ն է: Հաճախականային տարբեր շերտերով ՀՀԿՍ ստանալու համար անհրաժեշտ է նախագծել տվյալ շերտում աշխատող ԼՂՀԳ-ը, ինչը շատ ժամանակատար է և նախագծի այլ տեխնոլոգիայով վերարտադրման տեսանկյունից ոչ նպատակահարմար:

Որպես լայն հաճախականային տիրույթով ՀՀԿՍ, որը լիովին համատեղելի է ԿՄՕԿ տեխնոլոգիային և կարող է օգտագործվել բազմաթիվ ստանդարտ Մ/Ե սարքերում, առաջարկված է ստորև պատկերված ճարտարապետությունը [119,120] (նկ. 2.2):



Նկ. 2.2. Առաջարկվող ՀՀԿՍ-ի ճարտարապետությունը


Առաջարկվող ճարտարապետությունը տարբեր հաճախությունների դեպքում ապահովում է հենակային ազդանշանի տարբեր փուլեր: Քանի որ ԼՂՀԳ-ն կարող է աշխատել սահմանափակ հաճախականային շերտում, ապա այս ՀՀԿՍ-ն ունի մեկից

ավելի ԼՂՀԳ-եր, որոնք աշխատում են տարբեր հաճախականային շերտերում: Դրանք ընտրվում են՝ կախված հենակային ազդանշանի հաճախությունից: ՀՀԿՍ-ն բաղկացած է ՓԴ-ից (նկ. 2.2), որն ապահովում է ԼՊ-ի մուտքում հենակային և հետադարձ կապի ազդանշանների փուլերի տարբերության չափով ազդանշան (Սբ և Dn): ԼՊ-ի ելքային լարումը, անցնելով ցածր հաճախականային ֆիլտրով (ՑՀՖ), ձևավորում է ԼՂՀԳ-երի ղեկավարող V_c լարումը:

Այս համակարգի [119,120] սկզբունքային տարբերությունները հայտնի լուծումների համեմատ [104-109] այն են, որ հենակային ազդանշանի հաճախությունից կախված՝ հաճախության դետեկտորը (ՀԴ) ընտրություն է կատարում, թե որ ԼՂՀԳ-ը պետք է աշխատի ՀՀԿՍ-ի հետադարձ կապի մեջ:

ՀԴ-ն ներկայացնում է ազդանշանի հաճախությունից թվային կոդի փոխակերպիչ: ՀԴ-ի ելքում ստացված կոդը ղեկավարում է անալոգային դեմոլտիպլեքսորի ընտրող մուտքեր:

ՀԴ-ն բաղկացած է երկու ենթահանգույցներից (նկ. 2.3): Առաջնահերթ հենակային ազդանշանը կիրառվում է հաճախություն-լարում ձևափոխիչի (ՀԼՁ) մուտքին, այնուհետև ստացված լարումը անալոգաթվային ձևափոխիչի (ԱԹՁ) միջոցով ձևափոխվում է թվային կոդի:




Նկ. 2.3. ՀԴ-ի բլոկ-դիագրամը

Ելքային կոդի 2 բիթ կարգայնությամբ ՀԴ-ն բաղկացած է ՀԼՁ-ից, 2 բիթ զուգահեռ ԱԹՁ-ից և ՀԲ-ից (նկ. 2.4): Քանի որ ՀԼՁ-ի առաջարկվող կառուցվածքը չի ապահովում անհրաժեշտ հաճախականային շերտ, հետևաբար՝ ՀԼՁ-ի մուտքում

անհրաժեշտություն է առաջանում կիրառել ավելի փոքր հաճախությամբ ազդանշան: Այս գործողությունն իրականացնում է ՀԲ-ն: Այն հենակային ազդանշանի հաճախությունը բաժանում է և կիրառում է ՀԼԶ-ի մուտքին:

Զուգահեռ ԱԹԶ-ն բաղկացած է դիմադրության բաժանիչից և համեմատիչներից:


Առաջարկվում է լիովին նոր ՀԼԶ-ի կառուցվածք (նկ. 2.5): Այն բաղկացած է ղեկավարման հանգույցից (ՂՀ) և ԼՊ-ից, որը, կախված մուտքային ազդանշանի (V_{in}) հաճախությունից, ձևավորում է ելքային անալոգային լարում (V_{out}):



Նկ. 2.4. 2 բիթանի ելքային ազդանշանի կարգայնությամբ ՀԴ-ի բլոկ-դիագրամը


ՀԼԶ-ի աշխատանքը բաղկացած է երեք փուլերից (տե՛ս նկ. 2.7): ՀԲ-ով բաժաված հաճախությամբ V_{in} ազդանշանը կիրառվում է Բ և Բ3 համապատասխանաբար p-ՄՕԿ և n-ՄՕԿ տրանզիստորներին, որոնք աշխատում են որպես բանալիներ: Առաջին փուլում, t_1 ժամանակի ընթացքում (նկ. 2.6), երբ մուտքային ազդանշանը տրամաբանական «0» վիճակում է, Բ բանալին միացված է, և հաստատուն I հոսանքի աղբյուրը լիցքավորում է C1 ունակությունը: t_2 և t_3 ժամանակահատվածների ընթացքում Բ տրանզիստորը փակ է սակայն բաց է Բ3-ը, ինչի հետևանքով էլ հոսանքը հոսում է դեպի հողը: Երկրորդ փուլում, t_2

Ժամանակահատվածում, երբ $\Phi 1$ ազդանշանը «1» է, $\Phi 2$ -ը ընդունում է «0» արժեքը (նկ. 2.6), հետևաբար՝ $S 4$ փոխանցման փականը բաց է, և $C 1$ ունակության վրա կուտակված լիցքը վերաբաշխվում է $C 1$ և $C 2$ ունակությունների միջև: Երրորդ փուլում, երբ $\Phi 2$ -ը գտնվում է տրամաբանական «1» վիճակում, իսկ $\Phi 1$ -ը՝ «0», ապա $C 2$ ունակությունը մեկուսացվում է սխեմայից և պահում իր վրա կուտակված լիցքը, իսկ $C 1$ -ը լիցքաթափվում է $F 1$ -ի միջոցով: Մի քանի իտերացիաներից հետո V_{in} լարման արժեքը հաստատվում է:



Նկ. 2.5. Առաջարկվող ՀԼՁ-ի սխեման

(2.2)-ից հետևում է, որ ՀԼՁ-ի աշխատանքի արդյունքում ստացված ելքային լարումը կախված է միայն V_{in} ազդանշանի հաճախությունից, քանի որ հոսանքի I մեծությունը հաստատուն է:



Նկ. 2.6. Առաջարկվող ՀԼՁ-ի ղեկավարման հանգույցի ժամանակային
դիագրամները


$$V_k = \frac{I \cdot t_1}{C_2} \quad , \quad (2.1)$$

որտեղ I -ն հոսանքի աղբյուրի հոսանքն է, t_1 -ը՝ մուտքային ազդանշանի կիսապարբերությունը (նկ. 2.6), C_2 -ը՝ ելքային ունակությունը (նկ. 2.5):

$$V_k = \frac{I \cdot T}{2 \cdot C_2} = \frac{I}{2 \cdot f \cdot C_2} \quad , \quad (2.2)$$


որտեղ T -ը մուտքային ազդանշանի պարբերությունն է, իսկ f -ը՝ հաճախությունը:

Անալոգային դեմուլտիպլեքսորը (նկ. 2.8) բաղկացած է փոխանցման փականներից, որոնք ՀԴ-ի ելքային կողմից կախված՝ ԼՊ-ի ելքային լարումը հաղորդում են ԼՂՀԳ-ից մեկին:




Նկ. 2.7. ՀԼՁ-ի աշխատանքային փուլերը

Կախված 2 բիթ կարգայնությամբ $c[0:1]$ կողմի արժեքից՝ $V_{L\eta}$ – ն միացվում է չորս ելքերից մեկին, որոնք ղեկավարում են ԼՂՀԳ-ները:



Նկ. 2.8. Անալոգային դեմուլտիպլիկատորի կառուցվածքը



Նկ. 2.9. Առաջարկվող ՀԼԶ-ի ժամանակային դիագրամները


Մուտքային նվազագույն և առավելագույն հաճախությունների արժեքները որոշվում են հետևյալ արտահայտություններով՝

$$F_{\min} = (I/2 * C) * (1/V_{\max}) \quad (2.3)$$

$$F_{\max} = (I/2 * C) * (1/V_{\min}) \quad (2.4)$$


որտեղ $F_{\min}$ -ը և $F_{\max}$ -ը համապատասխանաբար մուտքային հաճախությունների, իսկ $V_{\min}$ -ը և $V_{\max}$ -ը ելքային լարումների նվազագույն և առավելագույն արժեքներն են:

Որպես ՓԴ օգտագործվել է գրականությունից [121] ճարտարապետությունը (նկ. 2.10): Այս կառուցվածքը, տեխնոլոգիական գործընթացից կախված, կարող է ապահովել մինչև ~8,5 ԳՀց աշխատանքային հաճախականություն:




Նկ. 2.10. ՓԴ-ի կառուցվածքը

Նախագծված ԼՊ-ի կառուցվածքը (նկ. 2.11) բաղկացած է հենակային լարման հանգույցից, որն ապահովում է S1, S2, S5 և S6 հոսանքի աղբյուրների հենակային լարումները: S3 և S4 տրանզիստորներն աշխատում են որպես փականներ: Նրանց մուտքային ազդանշանները գալիս են ՓԴ-ից և անցնում լարման մակարդակի ձևափոխիչով (ԼՄՁ): Փոխանցման փականը (ՓՓ) դրված է շրջիչի հապաղումը կրկնօրինակելու համար:




Նկ. 2.11. Նախագծված ԼՊ-ի կառուցվածքը

Պատկերված են ԼՊ-ի ժամանակային դիագրամները (նկ. 2.12), որտեղ $V_{\text{լն}}$ – ն ԼՊ-ի ելքային լարումն է մինչև ՅՀՖ-ով անցնելը: ՅՀՖ-ից հետո ազդանշանը $V_{\text{լնՖ}}$ -ն է:



Նկ. 2.12. Նախագծված $L\Gamma$ -ի ժամանակային դիագրամները


Ինչպես երևում է ՀՀԿՍ-ի բլոկ-դիագրամից (նկ 2.13), այն բաղկացած է երկու հետադարձ կապի շղթաներից:



Նկ. 2.13. Առաջարկվող ՀՀԿՍ-ի աշխատանքի բլոկ-դիագրամը

Առաջին շղթան ՀՀԿՍ-ների ավանդական $L\GammaՀԳ - \Phi\Gamma - L\Gamma$ հետադարձ կապն է, որի համալարումից հետո ՀՀԿՍ-ի ելքում հաստատվում են հենակային ազդանշանի փուլերը, իսկ երկրորդը՝ $L\GammaՀԳ - ՀԴ$ -ն է, որն ինքնակարգաբերմամբ ընտրում է $L\GammaՀԳ$ -ներից մեկը:

Առաջարկվող ՀՀԿՍ-ում օգտագործված են երկու տիպի ԼՂՀԳ-եր՝ շրջիչների և դիֆերենցիալ հանգույցների (նկ. 2.14) հիման վրա:




Նկ. 2.14. Առաջարկվող ՀՀԿՍ-ում օգտագործված ԼՂՀԳ-ի տեսակները

Առաջարկվող ՀՀԿՍ-ի համար իրականացվել է մոդելավորում HSpice [134] ծրագրային գործիքի միջոցով գործընթացի 20 տարբեր դեպքերի համար (արագ, դանդաղ, տիպային և խառը), ինչպես նաև հաշվի առնելով ջերմաստիճանի և սնման լարման փոփոխման դեպքերը:

Արդյունքում՝ առաջարկվող ՀՀԿՍ-ի ճարտարապետությամբ հնարավոր է ապահովել 1 ԿՀց -ից մինչև ~8 ԳՀց հաճախականային շերտ, ինչը լիովին բավարարում է Մ/Ե սարքերի հայտնի գրեթե բոլոր ստանդարտներին, ունի ~640 նվ առավելագույն համալարման ժամանակ, որը բավարարում է տվյալ տիպի

սխեմաներին ներկայացվող պահանջները, ~15-20% մակերեսի և ~10% հզորության մեծացման հաշվին:

Ստորև պատկերված են (նկ. 2.15) առաջարկվող ՀՀԿՍ-ի հոսանքի ծախսի և թրթռոցի մոդելավորման արդյունքները տարբեր դեպքերի և ԼՂՀԳ-երի համար:



Նկ. 2.15. Առաջարկվող ՀՀԿՍ-ի հոսանքի ծախսը և թրթռոցը

Արդյունքներից երևում է, որ հոսանքի առավելագույնը ծախսը (~8.7 մԱ) ստացվում է չորրորդ ԼՂՀԳ-ի դեպքում, որն ապահովում է առավելագույն հաճախությունը, իսկ

թրթռոցի վատագույն արժեքը (~25 *սկ*) դիտարկվում է ցածր հաճախություններում, որտեղ օգտակար ազդանշանն ունի ժամանակային մեծ միջակայք:

2.2. Դիմադրությունների համաձայնեցման եղանակը՝ առանց արտաքին, կայուն պարամետրերով տարրի օգտագործման,

Ինչպես նշվեց 1.4 - ում, Մ/Ե հանգույցներում հայտնի դիմադրության կարգաբերման մեթոդն ունի մի շարք թերություններ, մասնավորապես.

1. լրացուցիչ մակերեսի ծախսը, որը հիմնականում պայմանավորված է պատյանի և ԿԲ-ի կոնտակտային հրապարակներով,
2. արտաքին կայուն տարրի վրա հիմնված ԴՀՀ-ն համապիտանի չէ: Այն չի կարող օգտագործվել մի շարք Մ/Ե ստանդարտներում,
3. համակարգի մեկանգամյա կարգաբերումը,
4. արտաքին կայուն տարրի պայմանները ԿԲ-ի ներսում գտնվող տարրերի համեմատ տարբեր են, և ստանալ համատեղ կոմպոնենտներ գրեթե անհնար է,

Այս բոլոր թերությունները արտաքին կայուն տարրի առկայության հետևանք են: Այսպիսի ԴՀՀ-ում դիմադրությունը ԿԲ-ի վրա համեմատվում է ~1% ճշտությամբ ունեցող արտաքին կայուն տարրի հետ, և կատարվում է հաղորդչի և ընդունիչի կրկնօրինակ դիմադրությունների ստուգաճշտում:


Առաջարկվող ԴՀՀ-ի ճարտարապետությունը զերծ է թվարկված թերություններից, քանի որ դրա աշխատանքի սկզբունքը հիմնված է ԿԲ-ի վրա ինտեգրված կայուն տարրի վրա: Այս ճարտարապետությունը հիմնված է փոխանջատվող ունակությունների տեսության վրա և կարող է զգալիորեն նվազեցնել Մ/Ե սարքերի ինքնարժեքը և բարձրացնել համապիտանիությունը: Առաջարկվող լուծումը հիմնված է քվարցային գեներատորից եկող հենակային ազդանշանի վրա, որի հաճախությունն ունի ~1% ճշտություն, ինչպես նաև մետաղական ունակությունների վրա:

Անալոգային ազդանշանի ընդհատ ժամանակային տեսությունից [71] հայտնի է, որ «դիմադրությունը համարժեք է ունակության և հաճախության գումարին»: Այս

գաղափարը օգտագործելով որպես տարրական լուծում՝ նկարում պատկերված սխեմայից (նկ 2.16) կարելի է ստանալ դիմադրության վարքը: Սխեման բաղկացած է ունակությունից և տրազիստորներից, որոնք աշխատում են որպես «բանալիներ»:

Սխեմայի աշխատանքը պատկերացնելու համար հարմար է ընդունել, որ $V_U > V_E$:

1. $\Phi 2$ ազդանշանի տրամաբանական «1» վիճակում C ունակության լարումը հավասար է V_E -ի, իսկ $\Phi 1$ -ով ղեկավարվող n -ՄՕԿ տրանզիստորը փակ է:



Նկ. 2.16. Ունակությամբ և փականներով դիմադրության վարքի ձևավորումը

2. $\Phi 1$ ազդանշանի տրամաբանական «1» վիճակում C ունակությունը լիցքավորվում է $V_U - V_E$ լարումների տարբերության չափով:


$$\Delta Q = C * (V_U - V_E) \quad (2.5)$$

որտեղ ΔQ -ը լիցքի չափն է, իսկ V_U -ը և V_E -ը՝ համապատասխանաբար մուտքային և ելքային լարումները:

3. Հաջորդ $\Phi 2$ ազդանշանի տրամաբանական «1» վիճակի ընթացքում ΔQ լիցքը տեղափոխվում է C ունակությունից դեպի V_E : Արդյունքում ΔQ լիցքը տեղափոխվում V_U -ից դեպի V_E հենակային ազդանշանի T պարբերության ընթացքում:


Արդյունքում՝ միջին հոսանքը ($I_{\text{միջ}}$) կարելի է ներկայացնել (2.6)-ով, իսկ միջին դիմադրությունը ($R_{\text{միջ}}$)՝ (2.7)-ով:

Որպես «կայուն տարր» ԴՀՀ-ի առաջարկվող ճարտարապետությունում օգտագործվում է փոխանջատվող ունակություններով համակարգը (ՓՈԼՀ) (նկ. 2.18): Այս համակարգի մուտքերին տրվում են քվարցային գեներատորից եկող հենակային ազդանշան և հաստատուն հոսանք: Համակարգի առաջին փուլում, երբ $\Phi 1$ փականները բաց են, և օպերացիոն ուժեղարարը գտնվում է կրկնիչի ռեժիմում, C_1 ունակությունը լիցքավորվում է որոշակի Q լիցքով: Այնուհետև, $\Phi 2$ փականի բացվելուն պես, Q լիցքը վերաբաշխվում է C_1 և C_2 ունակությունների միջև: Այս գործընթացը կրկնվում է այնքան ժամանակ, մինչև C_2 ունակությունը լիցքավորվում է Q լիցքի չափով:



Նկ. 2.18. ՓՈԼՀ-ի ճարտարապետությունը


Արդյունքում՝ ՓՈԼՀ-ի ելքային լարումը կախված է C_1 և C_2 ունակությունների տարբերությունից և հենակային ազդանշանի հաճախությունից:



Նկ. 2.19. ԴՀՀ-ի աշխատանքի առաջարկվող բլոկ-դիագրամը

Առաջարկվող ԴՀՀ-ում (նկ. 2.19) համեմատիչը համեմատում է հաղորդչի և ընդունիչի կրկնօրինակների լարման անկումները ՓՈՒՀ-ի ելքային լարման հետ և արդյունքը փոխանցում ղեկավարման հանգույցին: Վերջինս ղեկավարում է հաստատուն հոսանքի աղբյուրը, կրկնօրինակների դիմադրությունների փոխանջատմանը և մուլտիպլեքսորը: Հիշող սարքը (ՀՍ) պահպանում է յուրաքանչյուր իտերացիայից հետո ստացված արդյունքը: Ստացված թվային կոդն ուղղարկվում է իրական հաղորդչին և ընդունիչին:

Առաջարկվող ԴՀՀ-ի համար կատարվել է մոդելավորում HSpice ծրագրային գործիքի միջոցով 20 տարբեր դեպքերի համար: Տիպային դեպքին համապատասխանող ժամանակային դիագրամները պատկերված են ստորև (նկ. 2.20):



Նկ. 2.20. Առաջարկվող ԴՀՀ-ի կարգաբերման ժամանակային դրագրամները

Ցուցադրված են երեք ծայրագույն դեպքերի համար մոդելավորման արդյունքները (աղ. 2.1), որոնցից առանձնացվել են կարգաբերման և դիմադրության ճշտությունները: Աղյուսակից երևում է, որ դիմադրության կարգաբերման սխալանքի առավելագույն արժեքը $\sim 5.1\%$ է:

Առաջարկվող ԴՀՀ-ն, համեմատած գրականությունից հայտնի լուծումների հետ [16-18], ունի հետևյալ առավելությունները.

1. ԿԲ-ի վրա զբաղեցնում է $\sim 21\%$ քիչ մակերես՝ համեմատած արտաքին կայուն տարով ԴՀՀ-ն հետ:
2. Համապիտանի է, քանի որ համատեղելի է տարբեր Մ/Ե սարքերի ստանդարտների հետ:
3. Համակարգը լիովին ինքնակարգաբերվող է և հնարավորություն է տալիս պարբերաբար կատարել կարգաբերումը:
4. Զերծ է արտաքին կայուն տարրից, ինչը հնարավորություն է տալիս ազատվել արտաքին ազդեցություններից և սխալանքներից:

Աղյուսակ 2.1

Առաջարկվող ԴՀՀ-ի մոդելավորման արդյունքները

Մոդելավորման դեպքերը	Կարգաբերման կողը (#)	Կարգաբերման ճշտությունը (%)	Դիմադրության սխալանք (%)
Տիպային-տիպային (55°C)	25	3,8	0,7
Արագ-արագ (-40°C)	23	1,1	4,5
Դանդաղ-դանդաղ (125°C)	30	2,3	5,1

Արդյունքում՝ մշակվել է Մ/Ե սարքերի հաղորդչի և ընդունիչ հանգույցների ԴՀՀ, որը ապահովում է վերոհիշյալ առավելությունները, սակայն ~3%-ով ավելի փոքր ճշտությամբ, քան արտաքին կայուն տարրով մեթոդը՝ 12%-ով ավելի մեծ հզորության հաշվին:

Ստացված արդյունքները լիովին բավարարում են մի շարք Մ/Ե սարքերի ստանդարտներին, ինչպիսիք են համապիտանի հաջորդական դողը (ՀՀԴ) և համակարգչային հանգույցների միջմիացումային համակարգերը (ՀՀՄՀ):


2.3. Սինքրոազդանշանի լցման գործակցի ճշգրտման օպերացիոն ուժեղարարով մեթոդը

1.2.1-ում շարադրված սինքրոազդանշանի լցման գործակցի սխալանքի աղբյուրները և դրանց բացասական հետևանքները ոչ միայն փոքրացնում են օգտակար ազդանշանի ժամանակային պաշարը, այլև կարող են ազդել որոշ համակարգերի աշխատունակության վրա:

Հաշվի առնելով, որ Մ/Ե սարքերի արագագործության պահանջարկը օր օրի ավելի է մեծանում, ինչը հանգեցնում է ազդանշանի պարբերության փոքրացմանը, լցման գործակցի կարգավորման հարցը գնալով կրիտիկական է դառնում: Այս փաստը


հիմնավորում է լցման գործակցի ճշգրտման համակարգերի մշակման անհրաժեշտությունը:

Անհրաժեշտ է մի այնպիսի համակարգ (նկ. 2.21), որը, ԳԼՋ-ից անկախ, կարգաբերի լցման գործակիցը և բավարարի ներկայիս Մ/Ե սարքերի պահանջները:



Նկ. 2.21. Հաջորդականացնող հանգույցում առաջարկվող ԼԳՃՀ-ն


Ինչպես նշվեց 1.1-ում, տվյալների հաջորդական փոխանցման Մ/Ե սարքերում կարիք է առաջանում օգտագործել ազդանշանի՝ զուգահեռից հաջորդական և հաջորդականից զուգահեռ կերպափոխիչներ: Պատկերված է հաջորդականացնող հանգույցի ելքային ազդանշանների լցման գործակցի ճշգրտման համակարգի առաջարկվող ճարտարապետությունը [124], որի մուտքին տրվում է ՓԻՀ-ից եկող սինքրոազդանշանի դիֆերենցիալ զույգը (clk_n և clk_p): ԼԳՃՀ-ի ելքային ազդանշանները (clk_dcc_n և clk_dcc_p) կիրառվում են 2×1 հաջորդականացնող կասկադին որպես ընտրման ազդանշան: Այս ազդանշանների հիմնական նպատակն է շեղել լցման գործակիցն այնպես, որ 2×1 կասկադի ելքում ստացվի 50%-ին հնարավորինս մոտ լցման գործակցով ազդանշան:



Նկ. 2.22. Առաջարկվող ԼԳՃՀ-ի բլոկ դիագրամը

Առաջարկվող ԼԳՃՀ-ում օգտագործվում է 2x1 կասկադի կրկնօրինակը (նկ. 2.22), որի մուտքերին տրվում են տրամաբանական ստատիկ «0» և «1» ազդանշաններ, իսկ ելքերն ինտեգրվում են, այնուհետև կիրառվում դիֆերենցիալ ուժեղարարի (ԴՈւ) մուտքերին [128,129]:

Հայտնի է, որ ամբողջական մակարդակներով փոփոխվող ազդանշանի ինտեգրված լարման արժեքը (In_n և In_p) համեմատական է լցման գործակցի մեծությանը: Այս արժեքներից կախված ԴՈւ-ն ձևավորում է ելքային Vduty_n և Vduty_p ազդանշանները, որոնք էլ ղեկավարում են ԼԳ-ի փոփոխող հանգույցի (նկ. 2.23) ղեկավարող ազդանշանները: Համակարգը համարվում է համալարված, երբ ԴՈւ-ի մուտքային լարումները հավասարվում են սնման լարման կեսին, հետևաբար՝ կրկնօրինակների ելքային ազդանշանների ԼԳ-ն առավելագույնս մոտենում է 50%-ին:




Նկ. 2.23. Առաջարկվող L9ՃՀ-ի L9-ն փոփոխող հանգույցը

Համակարգի համալարումից հետո L9-ի փոփոխող հանգույցի ելքային ազդանշանները (clk_dcc_n և clk_dcc_p) կիրառվում են հաջորդականացնող հանգույցի իրական 2x1 կասկադին:

L9-ն փոփոխող հանգույցի (նկ. 2.23) առաջին կասկադը ներկայացնում է դիֆերենցիալ ազդանշանների շեղումը փոքրացնող սխեմա: Երկրորդ կասկադն ապահովում է մուտքային լարման փոփոխությունից L9-ի շեղման գործողությունը, իսկ երրորդը՝ վիճակի պահպանման և մակարդակների հաստատման համար է:


Առաջարկվող L9ՃՀ-ի համար կատարվել է մոդելավորում HSpice ծրագրային գործիքով 20 տարբեր դեպքերի համար: Ծայրագույն դեպքին համապատասխանող ժամանակային դիագրամները, որոնք արտահայտում են L9-ի սխալանքի չափը, պատկերված են ստորև (նկ. 2.24): Այս արդյունքներում պատկերված են նաև համալարումից առաջ և հետո ԴՈւ-ի ելքային լարման արժեքները:



Նկ. 2.24. Ծայրագույն 3 դեպքերի մոդելավորման արդյունքները

Տիպային դեպքի համար ԼԳՃՀ-ի ելքային ազդանշանի տեսքը, մինչև ճշգրտումը և ճշգրտումից հետո, պատկերված է ստորև (նկ 2.25): Համակարգի ելքերը մինչև ճշգրտումն ունեն համապատասխանաբար ~58% և ~42% լքման գործակիցներ: Այնուհետև, համակարգի ճշգրտումից հետո, դիֆերենցիալ ազդանշանների լքման

գործակիցները ճշգրտվել են ընդհուպ մինչև ~49.5% և ~49.3%: Մոդելավորման մյուս դեպքերի արդյունքները պատկերված են ստորև (աղ. 2.2):



Նկ. 2.25. Տիպային դեպքի համար ԼԳՃՀ-ի ելքային ազդանշանի տեսքը ճշգրտումից առաջ և հետո,

Աղյուսակ 2.2

Առաջարկվող ԼԳՃՀ-ի մոդելավորման արդյունքները

Մոդելավորման դեպքերը	Լցման գործակիցը (%)				Հոսանքի ծախսը (մԱ)
	Առաջ		Հետո		
	Out_P	Out_N	Out_P	Out_N	
Տիպային-տիպային (55°C)	58	42	50,32	49,51	1,7
Արագ-արագ (-40°C)			50,78	49,62	2,3
Դանդաղ-դանդաղ (125°C)			50,13	49,25	1,5


2.3.1. Առանց օպերացիոն ուժեղարարի կիրառության սինքրոնազդանշանի լցման գործակցի ճշգրտման համակարգ:

Նախորդ ենթագլխում լցման գործակցի ճշգրտման համակարգում օգտագործվում է ԴՈւ: ԴՈւ-ի օգտագործումը հանգեցնում է մի շարք թերությունների, մասնավորապես՝

1. մակերեսի մեծացմանը,
2. հզորության ծախսի մեծացմանը,
3. լրացուցիչ նախագծման ժամանակի ծախսին, որը անհրաժեշտ է ԴՈւ-ի կայունությունը կարգաբերելու համար:

Արդյունքում՝ անհրաժեշտ է մշակել այնպիսի մի ԼԳ-ի ճշգրտման համակարգ, որը չի պարունակի ԴՈւ, կամ այլ հանգույց, որը կայունությունը կարգաբերելու անհրաժեշտություն ունի, զբաղեցնում է ավելի փոքր մակերես և ծախսում է համեմատաբար փոքր հզորություն:


Առանց ԴՈւ-ի ԼԳՃՀ-ի [125] բլոկ-դիագրամը պատկերված է ստորև (նկ. 2.26), որում ԼԳՃՀ-ի մուտքին տրվում է ՓԻՀ-ի ելքային սինքրոազդանշանը:



Նկ. 2.26. Առանց ԴՈւ-ի ԼԳՃՀ-ի բլոկ-դիագրամը

Առաջարկվող ճարտարապետության առանձնահատկությունը այն է, որ այն կարող է ճշգրտել ԼԳ-ի շեղումը միայն մեկ ուղղությամբ: Քանի որ ՓԻՀ-ի ելքային ազդանշանի ԼԳ-ն կարող է լինել 50%-ից և՛ մեծ, և՛ փոքր, ապա առաջարկվող ԼԳՃՀ-ի

մեջ օգտագործվում է դեպի վերև և դեպի ներքև L -ի ճշգրտման ենթահանգույցներ (Γ -ՎՃՀ և Γ -ՆՃՀ): Սակայն, նախքան այս երկու ենթահանգույցների օգտագործումը, անհրաժեշտ է որոշել, թե Φ -ի ելքային ազդանշանի ($V_{\text{մուտք}}$) L -ն որ ուղղությամբ է շեղվել: Այս գործողությունը կատարում է L -ի որոշման հանգույցը (L -ԳՈՀ): Այն որոշում է, թե ճշգրտման հանգույցներից որի ելքն է ակտիվ լինելու: Ընտրման գործողությունը կատարվում է մուլտիպլեքսորի միջոցով:




Նկ. 2.27. Առանց Γ -ի L -ի կառուցվածքը

Առանց Γ -ի L -ի կառուցվածքում (նկ. 2.27) հետադարձ կապի շրջիչով ղեկավարվելով, ունակություններով լարման բաժանիչի միջին կետը միանում է մուտքային ազդանշանին՝ շեղելով լցման գործակիցը ընդհուպ 50%: Քանի որ Γ -ՎՃՀ-

ունակությունների միջին կետը ակտիվանում է մուտքային ազդանշանի ինվերս ազդանշանով, ապա այն ճշգրտում է մուտքային ազդանշանի այն հատվածը, որը LQ -ի շեղման պատճառն է: Մեկ ճշգրտման հանգույցը կարող է ուղղել միայն մեկ կողմի վրա շեղված LQ -ով ազդանշանը: Հետևաբար՝ օգտագործված է երկու տիպի ճշգրտման հանգույց, որոնք տարբերվում են միմյանցից հետադարձ կապի ազդանշանի ակտիվ մակարդակով:

$LQNC$ -ի (նկ 2.28) մուտքին տրվում է համակարգի մուտքային ազդանշանի ինտեգրված լարումը: Մուտքային ազդանշանը, անցնելով $ՅՀՖ$ -ով, ինտեգրվում է: Ինտեգրված ազդանշանը տվյալ է պարունակում մուտքային ազդանշանի LQ -ի մասին: $LQNC$ -ն բաղկացած է դիմադրությամբ հետադարձ կապով շրջիչից, որի մուտքը պարապ ընթացքի ռեժիմում գտնվում է փոխանջատման կետի վրա: Մուտքային ազդանշանի փոփոխությունը հաղորդվում է ունակության ոտքերից մեկին: Կախված այն բանից՝ աճում է մուտքային ազդանշանը, թե նվազում, ելքում կունենանք տրամաբանական «0» կամ «1», քանի որ C ունակությունը հաղորդում է միայն մուտքային ազդանշանի փոփոխությունը: $LQNC$ -ի ելքային ազդանշանը թվային կոդ է, որը ղեկավարում է մուլտիպլեքսորի ընտրման մուտքին:



Նկ. 2.28. $LQNC$ -ի կառուցվածքը

Առաջարկվող առանց ԴՈւ-ի $LQNC$ -ի համար կատարվել է մոդելավորում HSpice ծրագրային գործիքի միջոցով 20 տարբեր դեպքերի համար: Ծայրագույն դեպքերի մոդելավորման արդյունքները ներկայացված են ստորև (աղ. 2.3):

Տիպային դեպքի մոդելավորման ժամանակային դիագրամներից մեկում (նկ. 2.29) աշխատում է ԴՎՃ-ը, քանի որ մուտքային ազդանշանի LQ -ն փոքր է 50%-ից (45%), իսկ մյուսում՝ մեծ է (55), հետևաբար՝ $LQNC$ -ն ընտրել է ԴՆՃ-ը: Արդյունքում՝

որպես համակարգի ելքային ազդանշան ընտրվում է այն ազդանշանը, որի $L_{\text{Գ}}$ -ն 50%-ին առավել մոտ է:

Աղյուսակ 2.3


Առանց ԴՌ-ի $L_{\text{ԳԾՀ}}$ -ի մոդելավորման արդյունքները

Մոդելավորման դեպքերը	Լցման գործակիցը (%)		Հոսանքի ծախսը (մկրԱ)
	ԴՎԾՀ	ԴՆԾՀ	
Տիպային-տիպային (55°C)	49.9	49.7	373
Արագ-արագ (-40°C)	50.8	50.4	428
Դանդաղ-դանդաղ (125°C)	49.1	51.1	315


Առաջարկվող առանց ԴՌ-ի $L_{\text{ԳԾՀ}}$ -ը ապահովում է $\sim \pm 1\%$ Լցման գործակից՝ անկախ ԳԼԶ-ից: Համեմատած $L_{\text{ԳԾՀ}}$ -ի ԴՌ-ով ճարտարապետության հետ, վատագույն դեպքում այն սպառում է $\sim 80\%$ -ով քիչ հոսանք և $\sim 35\%$ -ով փոքր մակերես:

Սակայն առաջարկվող համակարգի թերությունն այն է, որ նրա աշխատանքային հաճախության շերտը վերևից սահմանափակ է 2.5-3 ԳՀց-ով, իսկ ԴՌ-ով $L_{\text{ԳԾՀ}}$ -ի դեպքում առավելագույն աշխատանքային հաճախությունը հասնում է 5.5-ից 6 ԳՀց-ի:

Այսպիսով, առանց ԴՌ-ի $L_{\text{ԳԾՀ}}$ -ը համատեղելի է Մ/Ե սարքերի մի շարք ստանդարտների, ԴՌ-ով տարբերակի համեմատ սպառում է քիչ հզորություն և մակերես, սակայն սահմանափակվում է առավելագույն աշխատանքային հաճախությամբ:



ա)



բ)

Նկ. 2.29. ԼԳՃՀ-ը՝ ա) ակտիվ ԴՎՃՀ-ով և բ) ԴՆՃՀ-ով


2.4. Տվյալի և սինքրոազդանշանի կարգման ու հաստատման ժամանակային պաշարների կայունացման մեթոդը

1.2.2-ում քննարկվող հարցերը, Մ/Ե սարքերի արագագործության մեծացմանը հետ զուգընթաց, ավելի կրիտիկական են դարձել: Խառը-ազդանշանային սխեմաներում կարգման և հաստատման ժամանակների համապատասխան պաշարների պահպանում ժամանակատար գործընթաց է, որի լուծմամբ կարելի է խուսափել թրթռոցի մեծացումից և տվյալի սխալանքից:

Սակայն շատ դժվար է պահպանել կարգման և հաստատման ժամանակների համապատասխան պաշարները՝ հաշվի առնելով ԳԼՋ-ն և աղմուկները: Տարբեր տեխնոլոգիաների դեպքում նախագծի վերարտադրման ընթացքում այդ պաշարների ճշգրտման վրա ծախսվող նախագծման ժամանակը բավականին մեծ է:

Արդյունքում՝ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մի համակարգ, որը, անկախ ԳԼՋ-ից, ինքնակարգաբերմամբ ապահովում է ցանկալի կարգման և հաստատման ժամանակային պաշարներ և անկախ Մ/Ե սարքի աշխատանքային ռեժիմից՝ ապահովում է համակարգի կայունությունը և անխափան աշխատանքը:

Հաջորդական Մ/Ե սարքերում հաջորդականացնող հանգույցում տվյալի ազդանշանի ընտրումը տակտային ազդանշանով հիմնականում կատարվում է ազդանշանի մակարդակով:




Նկ. 2.30. Հաջորդականացնող հանգույցում տակտային և տվյալի ազդանշանները

Տակտային և տվյալի ազդանշանների ժամանակային դիագրամներից (նկ. 2.30), երևում է, որ լավագույն դեպքում տակտային ազդանշանը պետք է գտնվի տվյալի

ազդանշանի միջին դիրքում, ինչի արդյունքում էլ ստացվում են կարգման և հաստատման ժամանակային պաշարների լավագույն չափերը:

Առաջարկվում է կարգման և հաստատման ժամանակների ճշգրտման նոր համակարգ (ԿՇԺՀ) [126], որը, ԳԼԶ-ից անկախ, կապահովի տվյալ և տակտային ազդանշանների փուլերի ճիշտ դիրքերը միմյանց նկատմամբ:


ԿՇԺՀ-ի (նկ. 2.31) մուտքին որպես հենակային ազդանշան կիրառվում են ՓԻՀ-ի ելքային սինքրոազդանշանները (clk_p և clk_n): Ելքում ստացվում են փուլով ուղղված սինքրոազդանշաններ (clk_sh_p և clk_sh_n), որոնք ապահովում են մեծ կարգման և հաստատման ժամանակների պաշարներ տվյալի ազդանշանների նկատմամբ (Data_n և Data_p):



Նկ. 2.31. Հաջորդականացնող հանգույցում ԿՇԺՀ-ն

Առաջարկվող ԿՇԺՀ-ում (նկ. 2.32) ևս օգտագործվում է հաջորդականացնող հանգույցի կրկնօրինակը: Հենակային սինքրոազդանշանները, անցնելով ԼՂՀԳ-ով, կիրառվում են «տեր-ծառա» կառուցվածքով տրիգերներին և ՀԲ-ին: ՀԲ-ի ելքային ազդանշանները (clk_div2_p և clk_div2_n) կիրառվում են հաջորդականացնող հանգույցի կրկնօրինակին, որոնց ելքային ազդանշանները և ԼՂՀԳ-ով ընտրված ազդանշանները կիրառվում են բացառող-կամ փականի մուտքերին: Արդյունքում՝

ստացվում է հենակային սինքրոազդանշանի և հաջորդականացնող հանգույցի կրկնօրինակի ելքային ազդանշանների փուլային տարբերությունը: Այդ ազդանշանները, անցնելով ՑՀՖ-ներով, ինտեգրվում են և կիրառվում ԴՈւ-ի մուտքերին, իսկ ԴՈւ-ի ելքերը ղեկավարում են ԼՂՀԳ-ի հապաղումը:




Նկ. 2.32. Առաջարկվող ԿՀԺՀ-ի ճարտարապետությունը


ԼՂՀԳ-ի ելքային ազդանշանները համալարումից հետո կարող են կիրառվել իրական հաջորդականացնող հանգույցին: Հաջորդականացնող հանգույցի ճարտարապետությունը և իսկության աղյուսակը պատկերված է նկարում (նկ. 2.33):

ԴՈւ-ի ճարտարապետությունում (նկ. 2.34) օգտագործված է ցածրավոլտ և ելքային լարման աշխատանքային մեծ տիրույթով հոսանքի հայելին [127]: Հաշվի առնելով ներկայիս Մ/Ե սարքերի սնման լարման փոքր արժեքները, առաջարկվել է տրանզիստորների՝ գծային աշխատանքային տիրույթներում կրկնօրինակման մոտ 85% ճշտություն ապահովող հոսանքի հայելու սխեմա: Սնման լարման փոքր արժեքների դեպքում, այսինքն՝ ակունք-արտաբեր լարման փոքր արժեքների պատճառով տրանզիստորների գծային աշխատանքային ռեժիմ անցնելու պարագայում, հայելին

ունակ է կրկնօրինակելու հոսանքները: Չվատթարացնելով հոսանքների տեխնոլոգիական շեղումներով պայմանավորված անճշտությունները՝ առաջարկված տարբերակը ավանդական հոսանքի հայելու սխեմային գերազանցում է ելքային լարման աշխատանքային տիրույթով՝ հասցնելով այն ընդհուպ մինչև 0,94 Վ (նորմավորված սնման լարման արժեքին): Հոսանքի հայելու ավանդական սխեմայի համեմատ զգալիորեն ավելի մեծ ճշտություն ապահովելու շնորհիվ՝ մշակված սխեման կարող է լայնորեն կիրառվել ցածրավոլտ և փոքր էներգասպառմամբ անալոգային և խառը ազդանշանային համակարգերում:



Նկ. 2.33. Հաջորդականացնող հանգույցի ճարտարապետությունը



Նկ. 2.34. ԴՈւ-ի ճարտարապետությունը

Առաջարկվող առանց ԿՀԺՀ-ի համար կատարվել է մոդելավորում HSpice ծրագրային գործիքի միջոցով 20 տարբեր դեպքերի համար: Ծայրագույն դեպքերի համար հաստատման (T_h) և կարգման (T_l) ժամանակների պաշարների, ինչպես նաև

համակարգի համալարման ժամանակի մոդելավորման արդյունքները ներկայացված են ստորև (աղ. 2.4):

Աղյուսակ 2.4


ԿՀԺՀ-ի մոդելավորման արդյունքները

Մոդելավորման դեպքեր	T _h և T _y (պվ)		Համալարման ժամանակ (նվ)
	N	P	
Տիպային- տիպային (55°C)	98,05/100,93	98,7/100,12	~42
Արագ-արագ (-40°C)	108,08/90,7	107,5/91,32	~40
Դանդաղ- դանդաղ (125°C)	88,05/110,7	89,7/112,3	~46


Ստորև պատկերված է սինքրոազդանշանի և տակտային ազդանշանի միջև կարգման ժամանակի սխալի դեպքը (նկ. 2.35): Այս իրավիճակում հնարավոր է ելքային ազդանշանի թրթռոցի մեծացում, իսկ վատագույն դեպքում՝ նաև տվյալի սխալ ընթերցում: Այս օրինակում, կիրառելով առաջարկվող ԿՀԺՀ-ն, հնարավոր կլինի ճշգրտել կարգման ժամանակի պաշարը հաստատման ժամանակի հաշվին:

Առաջարկվող ԿՀԺՀ-ի համալարումից հետո երեք ծայրագույն դեպքերի համար տվյալի և սինքրոազդանշանի ժամանակային դիագրամները պատկերված են ստորև (նկ. 2.36): Ինչպես երևում է նկարից համակարգի համալարումից հետո տիպային դեպքի համար համալարման ժամանակը մեծացել է ~9,7 *պվ*-ից մինչև ~98 *պվ*, իսկ վատագույն հաստատման ժամանակի՝ դանդաղ լինելու դեպքում է և հավասար է ~88 *պվ*:

Վատագույն համալարման ժամանակը ստացվել է դանդաղ դեպքում՝ 46 *նվ*:



Նկ. 2.35. Կարգման ժամանակի սխալի օրինակը



Նկ. 2.36. ԿՀԺՀ-ի համալարումից հետո տվյալի և սինքրոազդանշանի ժամանակային դիագրամները

Արդյունքում՝ նախագծվել է բոլորովին նոր ԿՀԺՀ, որը համատեղելի է ժամանակակից հաջորդական Մ/Ե սարքերին և ապահովում է ինքնակարգաբերմամբ և անկախ ԳԼԶ-ից կարգման և հաստատման ժամանակային պաշարների ճշգրտում, ինչը էլ իր հերթին ապահովում է ազդանշանի թրթռոցի և տվյալի ՓՏՍ-ի փոքրացում:


5 Գրիթ/վ տվյալի փոխանցման արագության դեպքում ապահովում է նվազագույնը ~88 *սվ* կարգման և ~89 *սվ* հաստատման ժամանակային պաշարներ, ինչը լիովին համապատասխանում է տվյալի փոխանցման հաջորդական Մ/Ե ժամանակակից սարքերի (≤ 2.0 , ≤ 3.0 և ≤ 3.1) կարգման և հաստատման ժամանակային սահմանափակումներին (≥ 20 *սվ*)՝ մակերեսի ~12% և հզորության ~14% մեծացման հաշվին: Առաջարկվող համակարգը կրճատում է նաև ժամանակային պաշարների մեծացման վրա ծախսվող նախագծման ժամկետը մոտ 70%-ով:

2.5. Սնման լարման անջատումից առաջացած կորուստներից և ազդանշանի աղավաղումներից ինքնակարգաբերմամբ պաշտպանման համակարգը

Ինչպես նշվեց է 1.5-ում, այն Մ/Ե սարքերում, որոնք ունեն մեկից ավելի սնման կղզյակներ և էներգախնայող են, տարբեր աշխատանքային ռեժիմներում անհրաժեշտություն է առաջանում սնուցում մեկը կամ մի քանիսը անջատել:

Մեծ համակարգերի նախագծման ընթացքում շատ դժվար է հաշվի առնել աջատումից հետո առաջացած կորստի հոսանքները, որոնք առաջանում են տարբեր սնուցումներով աշխատող մասերի կոնֆլիկտային հատվածներում: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում նախագծել մի հանգույց, որը սնուցումն անջատելուց անմիջապես հետո սխեմայի կոնֆլիկտային կետերը ինքնակարգաբերմամբ կմիացնի ամենաբարձր կամ ամենացածր պոտենցիալին՝ բացառելով անցանկալի կորստի հոսանքների առաջացումը և դրա պատճառած հետևանքները: Արդյունքում փոքրանում են Մ/Ե հանհույցի տարբեր աշխատանքային ռեժիմներում հզորության ծախսը և պարամետրական սխալանքի հավանականությունը:

Առաջարկվող մեթոդը (նկ. 2.37) [130] նպաստում է բացառելու բազմասնուցումային համակարգերում լրացուցիչ հզորության կորուստները սնման անջատումների բոլոր ռեժիմներում: Գլխավոր P1 և P2 p-ՄՕԿ տրանզիստորներն աշխատում են հակափուլ:



Նկ. 2.37. Պաշտպանման համակարգի ճարտարապետությունը


Երբ Մնուցում 1-ը անջատվում է, P2 և P3 տրանզիստորները բացվում են, և արդյունքում P0 տրանզիստորի հարթակը միանում է Մնուցում 2-ին, որը ակտիվ է: Բացառվում է P0 տրանզիստորի հարթակ-ակունք և հարթակ-արտաբեր p-n անցումների ուղիղ միացման դեպքը: P3 տրանզիստորը P1 տրանզիստորի փականը միացնում է Մնուցում 2-ին և հուսալիորեն փական աշխատում:

Մյուս դեպքում, երբ Մնուցում 2-ն է անջատվում, Մնուցում 1-ին միացված N3 տրանզիստորը բացվում է և P1 տրանզիստորի փականը միացնում հողանցմանը: Արդյունքում՝ բացվում է P1 տրանզիստորը, և P0-ի հարթակը միանում է Մնուցում 1-ին: Առաջարկվող համակարգի համար կատարվել է մոդելավորում HSpice ծրագրային գործիքի միջոցով 20 տարբեր դեպքերի համար: Ծայրագույն դեպքերի համար չափվել է P0 տրանզիստորի կորստի հոսանքը համար (աղ. 2.5): Փորձը կատարվել է երկու դեպքի համար: Առաջին դեպքում չափվել է P0-ի կորստի հոսանքը՝ առանց համակարգի կիրառման: Այս դեպքում առավելագույն հոսանքը $\sim 2,7$ մկրԱ է:

Առաջարկվող համակարգի մոդելավորման արդյունքները


Մոդելավորման դեպքերը	Կորստի հոսանքը՝ առանց համակարգի կիրառման (մկրԱ)	Կորստի հոսանքը համակարգի կիրառմամբ (նԱ)
Տիպային- տիպային (55°C)	0,25	4,2
Արագ-արագ (-40°C)	2,7	20
Դանդաղ-դանդաղ (125°C)	0,21	1,8

Երկրորդ դեպքում չափվել է P0-ի կորստի հոսանքը համակարգի կիրառմամբ: Այս դեպքում առավելագույն հոսանքը ~ 20 նԱ է: Արդյունքում տվյալ չափերով մեկ տրանզիստորի դեպքում համակարգը կորստի հոսանքը նվազեցնում է $\sim 98\%$ -ով:



Նկ. 2.38. Պաշտպանիչ համակարգի մոդելավորման արդյունքների
ժամանակային դիագրամները

Պաշտպանիչ համակարգի օգտագործմամբ և առանց դրա մոդելավորման արդյունքների ժամանակային դիագրամներից (նկ. 2.38) երևում է, որ այն զգալիորեն նվազեցրել է կորստի հոսանքները: Մոդելավորման բոլոր արդյունքները ներկայացված են տոպոլոգիական նախագծի (նկ. 2.39) տեսքով [135,136]:



Նկ. 2.39. Առաջարկվող համակարգի տոպոլոգիական նախագիծը

Առաջարկվող համակարգը համատեղելի է ժամանակակից ԿՄՕԿ տեխնոլոգիաներին և կարող է օգտագործվել արդի շարժական սարքերի Մ/Ե համակարգերում, որոնք պահանջում են էներգախնայողություն:

Եզրակացություններ

1. Մշակվել է ինքնակարգաբերվող և համապիտանի լայն հաճախականային շերտով հապաղման հետադարձ կապով սխեմա, որը հապաղման մի քանի տարրերի կիրառման շնորհիվ՝ ապահովում է 1 ԿՀg -ից մինչև ~8 ԳՀg հաճախականային շերտ, ինչը ~70%-ով մեծ է առկա լուծումների համեմատ:
